ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ԻՐԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ. ՀԱՐԵՎԱՆՆԵ՞Ր ԹԵ՞ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ-ՈՒ ԱՇԽԱՐՀԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԽՈՅԱՆՆԵՐ

Խորհրդային Միության փլուզումից և նորանկախ պետությունների այսպես կոչված «հարավային գոտու» ստեղծումից հետո, հետխորհրդային վիթխարի չափերի հասնող երկրամասերում բախվեցին բազմաթիվ երկրների աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահեր: Անշուշտ մրցակցությունը հիմնականում գնում էր Ռուսաստանի Դաշնության և ԱՄՆ-ի միջև: Սակայն տարածաշրջանում իրենց ռազմաքաղաքական և մասամբ նաև տնտեսական հզորության վերաբերյալ մեծ համարում ունեցող Թուրքիային ու Իրանին թվում էր, թե Անդրկովկասում առաջացել է վակում, որը լցնելու իրավունքը առաջին հերթին վերապահված է հենց իրենց: Ուստի Անկարան և Թեհրանը միմյանց հետ մտան թեժ մրցապայքարի մեջ, միմյանց կանխելու և ժամ առաջ հաստատվելու Այսրկովկասում, այնտեղ առաջատար դիրքեր ձեռք բերելու և թելադրող ուժ դառնալու հեռահար մտադրությամբ:

Հայաստանն, անշուշտ, դուրս էր թուրք-իրանական մրցակցության դաշտից, որովհետև հասկանալի պատճառներով Թուրքիան չէր կարող այնտեղ որևէ ձևով ծավալվել: Առավել ևս, որ 1993թ. ապրիլին նա փակեց Հայաստանի հետ իր սահմանները, շրջափակման ենթարկելով նրան: Դա ուղեկցվեց Անկարայի կողմից Բաքվի քաղաքական կուրսի անվերապահ պաշտպանությամբ: Հայաստանի հետ հարաբերություններում Անկարան իր արտաքին քաղաքականությունը դարձրեց Ադրբեջանում իր սեփական շահերի պատանդը: Կասկածից վեր է, որ Թուրքիայի սերտ կապերը այդ հանրապետության հետ թելադրված էին ոչ միայն մշակույթների, լեզվի, պատմական գործոնների նմանությամբ կամ ընդհանրությամբ, այլև Ադրբեջանում սակա էժան էներգետիկ ռեսուրսներով:[1]

Հետևաբար թուրք-իրանական մրցապայքարի կիզակետում մնում էին միայն Վրաստանը և Ադրբեջանը: Այս վերջինիս հետ հարաբերութ-

յուններում Իրանն ուներ կարևոր առավելություն՝ բավականին մեծ ընդհանուր սահման: Ադրբեջան ներթափանցելու համար Իրանը նույն ուներ հենվել այդ երկրի շիիթական մեծամասնության աջակցության վրա, շրջանառության մեջ դնելով ինչպես կրոնական կարգախոսները, այնպես էլ այդ երկրի հետ Իրանի «դարավոր պատմական-

մշակութային ավանդույթները»: Մինչդեռ Թուրքիան Ադրբեջանի քաղաքական կողմնորոշումը իր կողմը շրջելու համար ինչպես միշտ, ասպարեզ հանեց երկու թյուրքալեզու «եղբայր ժողովուրդների արյան կանչը»:[2]

1989թ., այսինքն դեռևս Խորհրդային Միության գոյության տարիներին, Թեհրանը և Մոսկվան ստորագրեցին հյուպատոսական մի համաձայնագիր, որը նախատեսում էր, որ երկու երկրների քաղաքացիները, որոնք բնակվում են սահմանային գծի 45 կիլոմետրանոց գոտու երկու կողմերում (ԽՍՀՄ-ի և Իրանի միջև սահմանային գծի երկարությունը կազմում էր 2250կմ.) կարող են առանց վիզայի, տեղական իշխանությունների թույլտվությամբ, հատել այն: Դրա հետևանքը հանդիսացավ այն, որ 1989թ. դեկտեմբերի 31-ին Նախիջևանի Ինքնավար հանրապետության սովետա-իրանական սահմանի հատվածում տեղացի ազերիները քանդեցին ու ավերեցին սահմանային նշաններն ու մետաղյա արգելափակոցները: Իսկ 1990թ. հունվարին խորհրդային զորքերի Բաքու մտնելու նախօրյակին, հորդեցին Իրանի տարածքը, պատրվակ բռնելով սահմանի այն կողմում իրենց ազգականների հետ վերամիավորվելու ձգտումը:[3] Մ. Գորբաչևը մեղադրեց նրանց խոմեյնիզմին տուրք տալու մեջ: Մինչդեռ մինչև օրս այդ իրադարձությունը Բաքվում պաշտոնական մակարդակով մեկնաբանվում է որպես «անկախության համար պայքարի մի վառ ու հիշարժան դրվագ»:

1990թ. հունվարի 19-ին Նախիջևանի ԻՀՀ Գերագույն Խորհուրդը որոշում ընդունեց ԽՍՀՄ-ի կազմից ինքնավար հանրապետության դուրս գալու մասին և վկայակոչելով 1921թ. Կարսի պայմանագիրը, օգնության խնդրանքով դիմեց Թուրքիայի հանրապետությանը, ինչպես նաև Իրանի Իսլամական Հանրապետությանը, ՍԱԿ-ին և մի շարք այլ պետությունների ու միջազգային կազմակերպությունների: Հենց այդ ժամանակվանից սկսած Իրանը գործուն կերպով ներգրավվեց ադրբեջանական քաղաքականության ոլորտը՝ որպես տարածաշրջանային ուժի ազդու կենտրոնի:

ԻԻՀ-ը առաջիններից մեկն էր, որ ճանաչեց Ադրբեջանի Հանրապետությունը (1991թ.մարտի 12-ին): 1991թ. Իրանի արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթին պաշտոնական այցով մեկնեց Մոսկվա, իսկ ապա ուղևորություն կատարեց Սիջին Ասիա և Ադրբեջան: Այցի ընթացքում Բաքուն ցանկություն հայտնեց Իրանի հետ ունենալու սերտ հարա-

բերություններ:[4] Կողմերի միջև ստորագրվեց համաձայնագիր քաղաքական, տնտեսական, գիտական ու մշակութային համագործակցության սկզբունքների մասին: Այցի ընթացքում քննարկվեցին նաև Ադրբեջանի և Իրանի համար ռազմավարական հետաքրքրություն ներկայացնող հարցեր: Որպես այդ բոլորի հետևանք, իրանական կառավարությունը որոշում ընդունեց Ադրբեջանի հետ համատեղ Իրանի տարածքով կառուցել մի երկաթուղի, որը Ադրբեջանը կապելու էր Նախիջևանի հետ, Բաքվում բացվեց «Իրան-Ադրբեջան բարեկամության պալատ», հիմնադրվեց «Իրանա-ադրբեջանական բարեկամության ընկերություն», որը սկսեց հրատարակել «Բաքվի ձայն» շաբաթաթերթը, «Իմամ Խոմեյնի» բարեգործական միությունը մշտապես օգնություն սկսեց ցուցաբերել ավելի քան 250 հազար չքավոր ադրբեջանցիների և այլն: Առհասարակ, ԻԻՀ նախագահ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի կառավարման շրջանում (1989-1997թթ.) Իրանը մեծապես նպաստեց, որ Ադրբեջանը ընդունվի ՍԱԿ-ի, Իսլամական Կոնֆերանս կազմակերպության, Նորաստեղծ Տնտեսական համագործակցության կազմակերպության (ԷԿՕ) և այլ կառույցների մեջ:[5]

1991թ. օգոստոսին Ադրբեջանի հանրապետության առաջին նախագահ Այազ Մութալիբովը ԻԻՀ կառավարության հրավերով պաշտոնական այցով մեկնեց Թեհրան: Այցի ընթացքում նա հանդես եկավ հայտարարությամբ, որ Ադրբեջանի մերձեցումը Արևելքի երկրների և առաջին հերթին Թուրքիայի և Իրանի հետ ինքը համարում է «միանգամայն բնական ու դրական երևույթ»: Քննարկվեցին վտխշահավետ համագործակցությունն ընդլայնելու, երկու երկրների միջև «բարիդրացիական ու եղբայրական հարաբերությունները անշեղորեն զարգացնելու ու խորացնելու» վերաբերյալ հարցեր:[6]

Այդ այցից հետո, 1991թ. հոկտեմբերին, Բաքվում իրանական հյուպատոսությունը վերածվեց դեսպանության, իսկ Թեհրանում բացվեց Ադրբեջանի դեսպանություն: Միաժամանակ Իրանը որոշակի օգնություն ցուցաբերեց Ադրբեջանին նաև այդ պետության արտաքին քաղաքական գերատեսչությունը ձևավորելու գործում: Մասնավորապես Իրանի ԱԳՆ ընդունեց հատուկ որոշում, որի համաձայն ամբողջ աշխարհում Իրանի դեսպանությունները պետք է աջակցեին և զանազան ծառայություններ մատուցեին ինչպես ադրբեջանական դիվանագետներին, այնպես էլ այդ հանրապետության քաղաքացիներին:[7]

Անվարան կարելի է ասել, որ Այազ Մութալիբովի կառավարման շրջանում իրանա-ադրբեջանական հարաբերությունները ընթանում էին սաղմնավորման ու ձևավորման խաղաղ հունով: Սակայն այն բանից հետո, երբ ազերի ծայրահեղ ազգայնականների կուսակցության՝ Արբեջանի Ժողովրդական ճակատի (ԱԺՃ) ուժգին ճնշման ներքո 1992թ. մար-

տի 3-ին Ա.Մութալիբովը ստիպված էր հրաժարական տալ և հեռանալ երկրից, իրանա-ադրբեջանական միջպետական հարաբերությունները թևակոխեցին քաղաքական տեղատվության փուլ:

1992թ. հուլիսի 7-ին Աբուլֆազ Ալիևը (Էլչիբեյ) հռչակվեց Ադրբեջանի նախագահ: Նրա առաջին հայտարարություններից մեկը հանդիսացավ այն, որ Ռուսաստանը և Իրանը սպառնալիք են հանդիսանում Ադրբեջանի անվտանգության համար, ուստի Բաքուն պետք է դաշինքի մեջ մտնի Թուրքիայի և ԱՄՆ-ի, ինչպես նաև Արևմուտքի այլ տերությունների հետ: Էլչիբեյը փորձում էր համոզել իր երկրի հասարակական կարծիքը, որ «Ադրբեջանը թուրք և ամերիկացի բարեկամների օգնությամբ կվերածվի տարածաշրջանի ամենազարգացած երկրի»:[8]

Էլչիբեյի կառավարությունը հանդես եկավ ռազմաշունչ ծավալապաշտական հայտարարություններով ազերիների հայրենիքի «գերության մեջ գտնվող մասը»՝ Իրանական Ադրբեջանը «ազատագրելու» և «երկու Ադրբեջաններիի միավորման» վերաբերյալ: Ադրբեջանի Ժողովրդական ճակատի ծրագրի մեջ մտցվեց հատուկ կետ այսպես կոչված «Հարավային Ադրբեջանը» նորանկախ Ադրբեջանի հանրապետությանը միացնելու անհրաժեշտության մասին:[9] 1993թ. մարտին թուրքական «Թյուրքիշ թայմս» թերթին տված հարցազրույցում Էլչիբեյը նշել է. «Իրանն ապագայում կմասնատվի. նրա տարածքում կստեղծվեն հինգ՝ քրդերի, բելուջների, արաբների, ֆարսերի և թուրքերի երկրներ: Ողջ Ադրբեջանը միասնական կդառնա և ծնունդ կառնի 40 միլիոն ազերի բնակչությամբ երկիր»:[10]

Էլչիբեյը կտրականապես մերժում էր նաև դարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորման հարցում Իրանի ցանկացած միջնորդություն կամ քաղաքական նախաձեռնություն: Նրա այդ դիրքորոշման հետևանքով Իրանը լիովին դուրս մնաց խաղաղ կարգավորման գործընթացից:[11]

Էլչիբեյի քարոզչության ազդեցության ներքո Ադրբեջանի հանրապետությունից ազերիների խոշոր զանգվածներ ջարդ ու փշուր անելով սահմանային արգելքները, կրկին սկսեցին զանգվածորեն ներխուժել Իրանի տարածքը: Ի պատիվ իրանական կառավարության պետք է նշել, որ այդ օրերին նա դրսևորեց կատարյալ զսպվածություն, թեև Իրանում առկա էին ուժեր, որոնք գտնում էին, որ պահը միանգամայն պատեհ է Ադրբեջանի հանրապետության դեմ ձեռնարկելու ինչ-ինչ քայլեր:

Էլչիբեյի պանթյուրքիստական կողմնորոշիչները, նրա կողմից «արյունակից եղբայր» Թուրքիան ռազմավարական գործընկեր հռչակելը և առհասարակ Թեհրանի նկատմամբ սադրիչ քայլերը կտրուկ սրեցին Իրան-Ադրբեջան հարաբերությունները:[12] Թեհրանը հատկապես մտահոգված էր Բաքվի քարոզչության հետևանքով Իրանական Ադրբեջանում ապակայունացման հնարավորությունից: Իսկ դրա նախանշաններ-

ը ակնառու կերպով դրսևորվեցին նույնիսկ մայրաքաղաքում՝ Թեհրանում: 1993թ. ապրիլի 13-ին, Թեհրանի համալսարանի առավելապես ազգերի ուսանողությունը, որոնց մեջ քիչ չէին նաև ուսանելու նպատակով Բաքվից Իրան եկած ադրբեջանցիներ, Թեհրանի պետական համալսարանի տարածքում կազմակերպեցին մի խոշոր հանրահավաք, որտեղ Քելբաջարում ԼՂՀ ուժերի կողմից վերահսկողություն հաստատելու կապակցությամբ հնչում էին հակահայկական ճառեր ու կոչեր: Հանրահավաքի մասնակիցները այնուհետև քայլարշավ կազմակերպեցին դեպի քաղաքի կենտրոն, ուր գտնվում է Իրանում Հայաստանի Հանրապետության դեսպանության շենքը: Ճանապարհին քայլարշավի մասնակիցներին միացան նաև մեծ թվով թեհրանաբնակ ազերիներ: Դեսպանատան շենքի առջև հանրահավաքը շարունակվեց, հնչեցին հակահայկական ճառեր ու կարգախոսներ, այդ թվում նաև Իրանի խորհրդարանի (մեջլիս) ազերի պատգամավորների բերանից, ընդորում թուրքերեն լեզվով: Շիկացած մթնոլորտում ամբոխը այրեց Հայաստանի Հանրապետության պետական դրոշը, սկսեց քարկոծել դեսպանության շենքը, միաժամանակ փորձելով ջարդել դռները և ներխուժել ներս: Իրանական կառավարությունը անվտանգության ուժերի և զորքի օգնությամբ ցրեց հանրահավաքի մասնակիցներին: Հաջորդ օրը, ապրիլի 14-ին, Իրանի արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթին ուղերձով դիմեց Հայաստանի կառավարությանը, մտահոգություն հայտնելով «իրադարձությունների զարգացման այդօրինակ ընթացքի առնչությամբ»: Ուղերձում կոչ էր արվում հայկական ուժերը դուրս բերել «Ադրբեջանի գրավյալ տարածքներից» և Ղսրաբաղի խնդիրը լուծել քաղաքական ճանապարհով: Միաժամանակ Իրանի նախագահ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին մի նամակ հղեց Հայաստանի կառավարությանը, որտեղ ոչ միայն խստորեն քննադատվում էր նրա դարաբաղյան քաղաքականությունը, այլև սիրաշահելու խոսքեր էին պարունակվում Բաքվի հասցեին: «Նախագահ Ռաֆսանջանին,-իրավացիորեն նշում է Է.Բեգիջանյանը,-այդ քայլով թերևս նպատակ ուներ իսլամական աշխարհին ցույց տալ, որ, չնայած Էլչիբեյի համաթուրքական և հակաիրանական քաղաքականությանը, Թեհրանն Ադրբեջանը դիտում է իբրև մահմեդական երկիր և պաշտպանում է նրա շահերը»:[13]

Անկախ նրանից, թե իրականում ում էր հասցեագրված Իրանի նախագահի նամակը, փաստը մնում էր փաստ, որ նախ իրանական կառավարությունը թույլ էր տվել Հայաստանի դեսպանության ստջև կազմակերպված այդ սադրիչ հանրահավաքը և ապա ոչ միայն չէր դատապարտում նրա կազմակերպիչներին, այլև այդ բոլորի պատասխանատվությունը փաստորեն բարդում էր Հայաստանի վրա: Որպես բողոք այդ բոլորի դեմ, ԻԻՀ-ում Հայաստանի Հանրապետության արտակարգ և

լիազոր դեսպանը (սաղերիս հեղինակը) հեռացավ Թեհրանից և մեկնեց հայրենիք: Երկու շաբաթ անց, երբ Իրանի ԱԳ նախարարությունը հավաստիացումներ տվեց Հայաստանի կառավարությանը, որ նման միջադեպերը այլևս չեն կրկնվի, դեսպանը վերստին վերադարձավ Թեհրան և դեսպանության դրոշը կրկին բարձրացվեց:

Ուշագրավ է նշել, որ «երբ Բաքվում էքստրեմիստական հոսանքները գործում էին Իրանի դեմ»[14], վերջին հաշվով Էլչիբեյի շեշտված հակահրանական դիրքորոշումը նպաստեց Թեհրանի և Երևանի միջև հարաբերությունների էլ ավելի սերտացմանը:

1993թ. ամռանը Ղարաբաղում ադրբեջանական բանակի լուրջ անհաջողությունները, Ադրբիջանում հարաճուն կերպով խորացող սոցիալական, տնտեսական ու քաղաքական ճգնաժամը և միջազգային-քաղաքական բնույթի մի շարք իրողություններ այդ երկրում հանգեցրին նոր իշխանափոխության: 1993թ. հունիսին Սուրեթ Հուսեյնովի ջոկատների կողմից Էլչիբեյին իշխանազուրկ անելուց հետո, Ադրբեջանի կառավարման ղեկն անցավ նախկին կոմունիստական ֆունկցիոներ, 70-ամյա Հեյդար Ալիևի ձեռքը: Հետաքրքիր է նշել, որ դեռևս Էլչիբեյի օրոք, երբ Հեյդար Ալիևը հանդիսանում էր Նախիջևանի Գերագույն խորհրդի նախագահը, նրա և Թեհրանի միջև ստեղծվել էին հաստատուն կապեր: Այդ օրերին Ղարաբաղում ընթացող պատերազմի հետևանքով Նախիջևանը հայտնվել էր բարդ իրադրության մեջ: Նախիջևան-Բաքու օդային գիծը, որի թռիչքներն իրագործվում էին Իրանի օդային տարածքով, ըստ էության միակ ճանապարհն էր, որը Նախիջևանը կապում էր բուն Ադրբեջանի հետ: Սակայն Իրանի օգնությունը Նախիջևանին չէր սահմանափակվում դրանով: Այդ երկրամասի բնական կենսագործունեությունը ապահովելը անհնարին կլիներ առանց Իրանի աջակցության, որը Նախիջևանին մատակարարում էր ամեն ինչ, սկսած վառելիքից ու սննդամթերքից, վերջացրած առաջին անհրաժեշտության ապրանքներով: Այդ օրերին Թեհրան կատարած այցերի ընթացքում Հեյդար Ալիևը լավ ընդունելության էր արժանանում Իրանի քաղաքական ղեկավարության կողմից, որը հավանական է, հանձինս նրա տեսնում էր Ադրբեջանի ապագա նախագահին:

Հեյդար Ալիևի օրոք Ադրբեջանի արտաքին քաղաքական կողմնորոշիչների մեջ տեղի ունեցան էական փոփոխություններ: Նախ Բաքուն անթաքույց քայլեր կատարեց Ռուսաստանի հետ տարածություն պահելու ուղղությամբ, միաժամանակ աշխատելով սահմանափակել իր մասնակցությունը ԱՊՀ գծով ինտեգրացիոն գործընթացներին: Այդ քաղաքականությունն ուղեկցվում էր ԱՄՆ-ի, արևմտաեվրոպական առաջատար պետությունների և Թուրքիայի հետ մերձենալու վճռական քայլերով: Բաքուն չէր խորշում բազմիցս հայտարարելու, որ Վաշինգտոնը և

Անկարան, Թբիլիսիի հետ համատեղ, հանդիսանում են իր ռազմավարական դաշնակիցները:[15] Միաժամանակ Հ.Ալիևը որոշ չավավ մեղմեց Ա.Էլչիբեյի ուլտրա-շովինիստական և պանթյուրքիստական քաղաքական շեշտադրումները, առավել ևս, որ թուրքական հանրապետության ոլտշիչ ուժ հանդիսացող զինվորականությունը ևս սկզբունքորեն դեմ է պանթյուրքիզմը տարվտղելու գործելակերպին: Ինչ վերաբերում է ԻԻՀ հետ հարաբերություններին, ապա Հ.Ալիևի թիմը գտնում էր, որ այդ երկիրը չի կարող ապահովել Ադրբեջանի երկարաժամկետ շահերը: Բաքվում անշուշտ գիտակցում էին նաև, որ հնարավոր չէ կողմնորոշվելով դեպի Թուրքիան և սերտ հարաբերություններ պահպանելով Իսրայելի հետ, միաժամանակ լավ հարաբերությունների մեջ լինել Իրանի հետ: Ուստի Հ.Ալիևը աշխատում էր իր երկրի «հեռացումը» ԻԻՀ-ից իրականացնել մի այնպիսի ձևով, որպեսզի չհարուցի Թեհրանի շեշտված դժգոհությունը: Այդ քաղաքականության նպատակն էր առավելագույն օգուտներ քաղել Իրանի հետ բավականին ծավալուն առևտրատնտեսական հարաբերություններից:

Հ.Ալիևի որդեգրած արտաքին քաղաքական այդ նոր կուրսը միտված էր ոչ միայն լուծել երկրի առջև կանգնած կոնկրետ խնդիրներ, այլև ուղղված էր ապագային, հետապնդելով հեռահար նպատակներ: Այն միտված էր նաև Ադրբեջանը վերածելու Կովկասում և Անդրկասպյան տարածաշրջանում Արևմուտքի ազդեցությունը տարածողի դերին[16], որը կարող էր ապագայում Ադրբեջանին բերել ոչ միայն առատ տնտեսական օգուտներ, այլև շոշափելի քաղաքական դիվիդենաներ:

Առաջին պահ Հ.Ալիևի արտաքին քաղաքական կողմնորոշիչները հստակորեն պարզ չէին շատերի համար, մանավանդ որ նրա իրագործողը դրանք կյանքի էր կոչում մեծագույն զգուշությամբ: Ուստի այդ առթիվ Արևմուտքում հայտնվում էին ծայրահեղ հակասական կարծիքներ: Շատերը գտնում էին, որ Հ.Ալիևը, որն իր անցյալ կոմունիստական շրջանի գործունեությամբ վաստակել էր Իրանի մասնատման ակտիվ ջատագովի համբավ[17], դժվար թե իր քաղաքականությունը կառուցի դեպի այդ երկրի հետ սերտ համագործակցությունը: Իսկ մի շարք վերլուծաբաններ թվաց, թե քայլեր-կատարելով ռուսական կողմնորոշումից հեռանալու ուղղությամբ, Ադրբեջանի նախագահը անխուսափելիորեն տնտեսական, քաղաքական և ռազմական աջակցություն է փնտրելու իր սահմանակից ԻԻՀ-ում: Այդ հաշվարկը կառուցված էր այն մտայնության վրա, որ տարածաշրջանի կարևորագույն ուժային կենտրոններից մեկի՝ Իրանի հետ տնտեսական գործընկերության և մշակութային համագործակցության միջոցով Ադրբեջանը հնարավորություն է ստանում հավասարակշռել իր ակտիվ դիվանագիտական շվտումները Արևմուտքի հետ: Ընդորում հաստատ համոզմունք էր հայտնվում, որ իր հերթին Իրանը ևս չի

հապաղի օգնության ձեռք մեկնել «աշխարհում երկրորդ շիիթական պետությանը», մանավանդ որ դա բխում էր ԻԻՀ արտաքին քաղաքական դոկտրինի սկզբունքներից:

Այդ բոլորի տրամաբանական եզրակացությունը հանգում էր նրան, որ արտաքին քաղաքականության բնագավառում այսպես կոչված «հարավային ուղղության» ընտրությունը իրենով նշանավորում է Ադրբեջանի վերադարձը իսլամական աշխարհ:[18] Բաքվում մի շարք իսլամամետ գործիչներ նույնիսկ շտապեցին արտահայտվել այն ոգով, որ միջազգային հարաբերությունների համակարգում իր փնտրտուքների մեջ Ադրբեջանը վերջապես գտնում է իր համապատասխան տեղը: «Իսլամ, քաղաքականություն, նավթ»,- ահա սրանք են Ադրբեջանի և նրա սահմաններից հարավ գտնվող տերությունների շահերի շփման գլխավոր կետերը, եզրակացնում էին այդ կերպ մտածող գործիչները:[19]

Վերոհիշյալ տեսակետի ամրակայման լուրջ կոչան հանդիսացան 1993թ. ԻԻՀ նախագահ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի պաշտոնական այցը Բաքու և 1994թ. նախագահ Հ.Ալիևի պատասխան այցը Թեհրան, որոնց հետևանքով ստորագրվեցին ավելի քան 90 փաստաթղթեր, այդ թվում նաև «Բարեկամության մասին համատեղ հայտարարություն»:[20]

Սակայն գլխապտույտ արագությամբ տեղի ունեցած մի շարք իրողություններ եկան սառը ցնցուղի դեր խաղալու այդ կերպ մտածող գործիչների համար, որոնք ցանկալին ընդունում էին իրականության տեղ: Նախ Հ.Ալիևի կողմից նախագահական պաշտոնն ստանձնելուց անմիջապես հետո արագործնախարար Հասան Հասանովը մամուլում հանդես եկավ հոդվածով, որտեղ անդրադառնալով Ադրբեջանի արտաքին քաղաքական կողմորոշիչներին, Իրանի կապակցությամբ արտահայտվեց վերին աստիճանի զգուշորեն, նշելով, որ վերջին տարիներին այդ երկրի հետ հարաբերությունները եղել են ծայր աստիճանի անհարթ: Ճիշտ է, տպավորությունը մեղմելու համար նախարարը ավելացնում էր, որ ինքը հավատում է, որ կգա ժամանակ, երբ Ադրբեջանի տնտեսական շահերը նրան կտանեն Պարսից ծոց և այնժամ երկու հարևան պետությունները միմյանց կապող տրանսպորտային երակները ձեռք կբերեն վճռական նշանակություն,[21] սակայն այդ վերապահումը չէր վախում հարցի բուն էությունը:

Աստիճանաբար հստակորեն ուրվագծվեցին Հ.Ալիևի արտաքին քաղաքականության առաջնայնությունները, որոնց մեջ կենտրոնական տեղը պատկանում էր հստակ կողմնորոշմանը դեպի թուրքական պետականության աշխարհիկ լայիցիստական նմուշածը և մերձեցման ձգտումը ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի հետ: Հիրավի, Հ. Ալիևը գրեթե անվտավախ պահպանեց Էլչիբեյի կանխագծած Բաքու-Անկարա փոխհարաբե-

ռությունները, մասնակի խմբագրման եթարկելով իր նախորդի ճչացող համաթուրքականությունը: Միաժամանակ գիտակցելով Ռուսաստանի հետ քայլ պահելու կարևորությունը Ադրբեջանի ազգային շահերի տեսակետից, փորձառու Հ.Ալիևը ապահովեց Ադրբեջանի անդամակցությունը ԱՊՀ-ին, դրանով իսկ միանգամից թուլացնելով Բաքու-Մոսկվա հարաբերություններում վերընթաց գծով ընթացող լարվածությունը:

Անշուշտ Բաքվի վերոհիշյալ քաղաքականությունը անսքող դժգոհությամբ պետք է ընդունվեր Թեհրանի կողմից: Այնտեղ հասկացան, որ Ադրբեջանի աշխարհիկ-մոդեռնիստական ղեկավարությունը (նախկին կոմունիստները) աշխատում է նվազագույն չավավ տուրք տալ կրոնական գործոնին, այսինքն իրանական կողմնորոշմանը, նախապատվությունը տալով թուրքական աշխարհիկ մոդելին: Բացի այդ, Թեհրանում ձևավորվեց այն տեսակետը, որ Ադրբեջանը ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի, Իսրայելի և Թուրքիայի համար ճանապարհ է բաց անում դեպի Կովկաս և առհասարակ դեպի տարածաշրջան, որոնք հիմնավորվելով այնտեղ, անխուսափելիորեն աշխատելու են թուլացնել Իրանի ներկայությունը: Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի 1997թ. Բաքու կատարած այցից հետո իրանական մամուլը գրեց. «Այժմ տարածաշրջանում ստեղծվել է Ադրբեջան-Թուրքիա-Իսրայել եռանկյունին: Սակայն մեզ չի թվում, որ այդ համագործակցությունը ի վիճակի լինի նպաստել Ղարաբաղի հիմնահարցի լուծմանը»:

Իրանա-ադրբեջանական միջպետական հարաբերությունների վրա ազդող ծանրակշիռ գործոն հաղիսացավ հատկապես Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Միանգամայն բնական է, որ Ղարաբաղում ընթացող պատերազմը անմիջականորեն շոշավում էր նաև Իրանի շահերը: Նախ պատերազմն ընթանում էր նրա սահմանների մոտ, Արաքսի մյուս ափին, և Թեհրանում մտավախություն կար, որ լոկալ կոնֆլիկտը կարող է ծավալվել, իր մեջ ընդգրկելով տարբեր շահագրգիռ պետությունների, այդ թվում նաև Թուրքիային, և վերածվել տարածաշրջանային հակամարտության, գուցե և հրդեհի:

Թեհրանի համար հատկապես մղձավանջ էր Իրանական Ադրբեջանում ազերիական ազգայնականության պոռթկման վտանգը, ինչպես նաև հայկական զոհքերի գործողությունների անհաջողության դեպքում Անկարայի և Բաքվի միջև ուղղակի կապի ստեղծման հավանականությունը, որն ուղիղ ճանապարհով կտաներ դեպի համաթուրքականների երևազանքների իրագործում, այսինքն Իրանական Ադրբեջանի անջատում Իրանի կազմից: Անշուշտ առաջին հերթին հենց դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ պատերազմի տարիներին Թեհրանը անտարբեր չէր Հայաստանի ճակատագրի նկատմամբ, թեև թե՛ երկրի ներսում և թե՛ դրսում (Սաուդյան Արաբիա, Պակիստան, Աֆղանստան և այլն) առկա

էին ուժեր, որոնք ճնշում էին գործադրում Թեհրանի վրա, պահանջելով միակողմանի կերպով աջակցել Ադրբեջանին, փորձելով դա հիմնավորել նրանով, որ դարաբաղյան հակամարտությունը դա պատերազմ է իսլամի և քրիստոնեության միջև:

Իսկապես, արևմտյան մի շարք փորձագետներ չէին բացառում, որ Իրանը իր համերաշխությունը կհայտնի «շիիթական երկրորդ պետությանը» և Ադրբեջանի կողմից կմիջամտի կոնֆլիկտին:[22] Այդ տեսակետի հավանականության լուրջ կովան հանդիսացավ Թեհրանի հետևյալ քայլը. նա զորքեր ուղարկեց Ադրբեջանի սահմանների մոտ, դրանց անվտանգությունն ապահովելու համար:[23] Անդրադառնալով այդ նույն հարցին, իրանական դիվանագետ դոկտոր Աբբաս Մալեքին գրում է, որ «Հայկական զորքերի հետագա առաջխաղացումն արգելակող գործոններից մեկը (Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի մյուս շրջանների՝ Զանգելանի, Ֆիզուլիի, Ջեբրայիլի գրավումից հետո) հանդիսացավ Իրանի Իսլամական Հանրապետության կողմից արված նախազգուշացումը»:[24]

1993թ. հուլիսին դարաբաղյան բանակի կողմից Աղդամի գրավումը խիստ բացասական արձագանք ունեցավ Թեհրանում: Իրանական մամուլը, հատկապես «Ջոմհուրիե էսլամի» թերթը, Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունները մեկնաբանեց որպես «հայկական ագրեսիա»: «Թյուրքական համերաշխության» պոռթկման դեմ որպես շանթարգել Թեհրանն աշխատում էր տարբեր ձևերով ի ցույց դնել իր աջակցությունը Ադրբեջանին և Հ.Ալիևի կառավարությանը: Հենց այդ նույն նպատակով Իրանի կրոնապետ-առաջնորդ («ռահբար») այաթոլլա սեյյեդ Ալի Խամենեին ցուցադրական այց կատարեց Արևելյան Ադրբեջան նահանգ, որի կենտրոն Թավրիզում հայտարարեց, որ ԻԻՀ-ը այսուհետև զգայուն կլինի ադրբեջանական տարածքների նկատմամբ ոտնձգության հարցում:[25] «Հայաստանի կառավարությունն ու Ղարաբաղի հայերը ճնշում են տարածաշրջանի մահմեդականներին: Դատապարտելով Հայաստանի աջակցությամբ արցախահայերի վերջին գործողությունները, իբանահայությանից ակնկալում ենք նմանօրինակ վերաբերմունք»,- հայտարարեց ռահբարը:[26] Որպես այդ ակնկալիքի անմիջական արձագանք, Թեհրանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Արտակ արքեպիսկոպոս Մանուկյանը մամուլում հանդես եկավ «դատապարտող» հայտարարություններով: Դրա շնորհիվ Իրանի հասարակական կարծիքն իրեն բավարարված համարեց և միջադեպը կարելի էր համարել փակված: Իրան-Հայաստան վախհարաբերությունները դիմացան այդ փորձությանը ևս և դարաբաղյան հարցը իր բացասական անդրադարձը չունեցավ երկու երկրների վերընթաց զարգացող միջպետական հարաբերությունների վրա:

Մինչդեռ Բաքուն այդ հարցում Թեհրանից պահանջում էր լավելին, ընդորում ոչ թե հայտարարություններ, այլ գործնական քայլեր: Ղարաբաղյան կոնֆլիկտի հենց սկզբից Բաքուն այն տեսակետին էր, որ Իրանը «գաղտնի՝ ու ծածուկ ձևով հովանավորում է հայերին»[27]: Բաքվում կատարում էին հետևյալ հարցադրումը. ինչու՞, ի՞նչ պատճառներով ԻԻՀ-ն ստեղծում է հնարավորություններ Հայաստանին փակուղուց և տնտեսական շրջափակումից դուրս բերելու համար, երբ հասարակ տրամաբանությունը հուշում է, որ «իսլամական աշխարհի առաջին ուժ հանդիսացող» Իրանը պարտավոր է օգնության ձեռք մեկնել «Հայաստանի ագրեսիայի զոհ» հանդիսացող «աշխարհի երկրորդ շիիթական պետությանը»: Սակայն չնայած ադրբեջանական խթերլիշմենթի Իրանից օգնություն ստանալու կամ Հայաստանը շրջափակելու համառ պահանջներին, Իրանը չի գնում այդ քայլին:

Ադրբեջանի ԶԼՄ-ները, մասնավորապես այնպիսի թերթեր, ինչպես «Ադրբեջանը», «Խալդ գազեթի»-ն, «Մուխալիֆաթ»-ը, «Էքսպրես»-ն, «Ազադլըղ»-ը, «525 gazet»-ը, «Ենի Մուսավաթ»-ն «Ենի Ազերբայջան»-ը, «Իքի սահիլ»-ը և այլն, իրենց հրապարակումներում նույնիսկ մեղադրում էին Իրանին, որ նա փորձում է խախտել կայունությունն Ադրբեջանում և որ իբր Թեհրանն է աջակցել հայերին Շուշին և Լաչինը գրավելու գործում:[28] Արաքսի վրա Հայաստանի և Իրանի կողմից համատեղ կառուցված կամուրջի շահագործման հանձնումը, որը կատարվեց 1995թ. վերջին, ուղղակի հունից հանեց Բաքվին, որը դա գնահատեց որպես Ադրբեջանի մեջքին Իրանի կողմից հասցված «դաշույնի հարված»: Ադրբեջանի արտաքին քաղաքական հարցերի գծով պետխորհրդական Վաֆա Գուլուզադեն մեղադրում էր Թեհրանին նաև նրանում, որ նա դաշնակցային հարաբերությունների մեջ է մտնում Ռուսաստանի և Հայաստանի հետ ընդդեմ Ադրբեջանի: Նրա կարծիքով աստիճանաբար ձևավորվում է Մոսկվա-Երևան-Թեհրան առանցքը, որը կոչված է ռուս-հայ-իրանական սեպ խրել թուրքական մակրոսուբյեկտի մեջ:

1996թ. մարտին ԻԻՀ արտգործնախարար Վելայաթիի Բաքու կատարած պաշտոնական այցի ժամանակ Ադրբեջանի արտգործնախարար Հասան Հասանովը խիստ քննադատության ենթարկեց Թեհրանին, նրան մեղադրելով Հայաստանը շրջափակումից փրկելու մեջ: Որպես պատասխան մեղադրանք Իրանի ԱԳ նախարարը լուրջ մտահոգություն հայտնեց Բաքու-Թել-Ավիվ սերտ հարաբերությունների առնչությամբ, նշելով, որ Իսրայելի հետ Ադրբեջանի սերտ կապերը անհանգստացնում են իրանական հասարակայնությանը: Հասան Հասանովը պատասխանել էր, որ այդ հասարակայնությանն ավելի շատ պետք է անհանգստացներ այն, որ Իրանը, անտեսելով Ադրբեջանի իր մուսուլման եղբայրների շահերը, շարունակում է ընդլայնել կապերը

ՀՀ ԳԱ ՀՈՒՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայաստանի հետ և որ նա փաստորեն Հայաստանին հնարավորություն ընձեռնեց չեզոքացնելու նրա շրջափակումը Ադրբեջանի կողմից: Քաղաքական շանտաժի նկատառումներով Հ.Հասանովը նաև ավելացնում է, որ Հայաստանի նվաճողական ախորժակը չի սահմանափակվելու Ղարաբաղով: Հերթը անպայման գալու է նաև Նախիջևանին, ինչպես նաև հայերի կողմից «Պարսկահայք» հորջորջվող Իրանական Ատրպատականի տարածքներին, որոնք իբր հայերն արդեն մտցրել են «Մեծ Հայաստանի» քարտեզի մեջ: Դիվանագիտական այդ առճակատման հետևանքը հանդիսացավ այն, որ երբ նույն 1996թ. օգոստոսին Հ.Հասանովը եռօրյա այցով այցելեց Թեհրան, այնտեղ տեղի ունեցած բանակցությունների ժամանակ իրանական ղեկավարության կողմից ոչ մի դրվատական խոսք չասվեց նախագահ Հ.Ալիևի և նրա վարչակազմի վարած քաղաքականության մասին: Ավելին, ոչ մի իրանական գործիչ բերանից չարտաբերեց, որ Ադրբեջանի հետ հարաբերությունները Իրանի համար ունեն ռազմավարական նշանակություն, մինչդեռ նախորդ տարիներին բանակցությունների ժամանակ դա հնչում էր որպես պրոսակոլային արտահայտություն: Իրանական կառավարությունը խուսափեց նաև Հ. Հասանովի հետ տարածաշրջանային, միջազգային և երկկողմանի քաղաքական հարցերի խորացված քննարկումից: Այցի հետևանքով կողմերի միջև չստորագրվեցին նաև նոր պայմանագրեր և նույնիսկ արտգործնախարարների համատեղ հայտարարություն: Ավելին, այցի ընթացքում իրանական մամուլը գրեց, որ Ադրբեջանը միջազգային հարաբերություններում հիմնավորված, մշտական և վստահելի սկզբունքներ չունի, որ նրա դիվանագիտությունը «լոդացող» է, կառուցված խախուտ հիմքերի վրա:

Հարկ է նշել, որ դարաբաղյան կոնֆլիկտի հենց սկզբից Իրանը իր գործուն մասնակցությունը բերեց այդ կոնֆլիկտի կարգավորման հարցում: Նույնիսկ արևմտյան տերություններն ընդունում էին, որ Իրանը որպես տարածաշրջանային կարևոր պետություն և ուժային կենտրոն դերակատարություն ունի տարածաշրջանային խնդիրների, առավել ևս - կոնֆլիկտների լուծման գործում: Ֆրանսիայի կողմից Սինսկի խմբի նախագահը, գիտակցելով այդ հանգամանքը, ժամանեց Իրան այդ երկրի ղեկավարության հետ Ղարաբաղի հարցում մտքեր վտխանակելու համար: Բանակցությունների ժամանակ նա հայտարարեց, որ «Իրանի դերը կովկասյան տարածաշրջանում կայունության ու անվտանգության պահպանման գործում միանգամայն ակնհայտ է»:[29] Պետք է խոստովանել նաև, որ իրանական դիվանագետների իրականացրած միջնորդական առաքելության շնորհիվ մի քանի անգամ հաջողվեց գեթ ինչ որ ժամանակամիջոցի ընթացքում դադարեցնել ռազմական գործողությունները հայկական և ադրբեջանական ուժերի միջև:

Սակայն չնայած Իրանի կողմից բարի կամքի դրսևորման այդ քայլերին, Բաքուն, որպես կանոն, մերժել է Ղարաբաղի կոնֆլիկտի լուծման գործով Իրանի միջնորդական առաջարկները: 1998թ. օգոստոսի կեսերին ԻԻՀ արտգործնախարար Քամալ Խարրազիի Բաքու կատարած պաշտոնական այցի ժամանակ իրանական դիվանագետը հայտարարեց, որ Թեհրանը պատրաստ է առավել ակտիվորեն նպաստել հայ-ադրբեջանական կոնֆլիկտի կարգավորմանը:[30] Սակայն առաջարկը մնաց անպատասխան: Ուշագրավ է նշել նաև հետևյալ միջադեպը՝ 1999թ. մարտի 14-ին Ադրբեջանի ԱԳ նախարար Թոֆիկ Զուլֆուղարովի եռօրյա պաշտոնական այցի ժամանակ Թեհրան, երբ նախարարը հանդիպում ունեցավ ԻԻՀ նախագահ Մոհամմադ Խաթամիի հետ, վերջինս պատրաստակամություն հայտնեց միջնորդել դարաբաղյան հիմնահարցի լուծման առնչությամբ: Ադրբեջանի նախարարը հնարավոր և ընդունելի համարեց այդ առաջարկը և նույն օրը Իրանի արտգործնախարարի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ հաստատեց իր այդ տեսածը: Սակայն նախարարի Բաքու վերադառնալուց հետո ոչ միայն գործնական ընթացք չտրվեց նրա պաշտոնական հայտարարությանը, այլև Զուլֆուղարովը հեռացվեց իր պաշտոնից:

Ղարաբաղի հարցի առնչությամբ Թեհրանի վարած քաղաքականության մեջ ակնառու կերպով նկատելի է տարբեր ժամանակներում մոտեցումների մեջ որոշակի փոփոխություն. այդ հարցի կապակցությամբ իրանական կողմի ընդհանուր ձևակերպումը հանգում էր նրան, որ Իրանը պատերազմող երկու կողմերի նկատմամբ վարում է «խստիվ հավասարակշռելու» քաղաքականություն, առավելություն չտալով նրանցից որևէ մեկին: Սակայն սկզբնական էտապում ըստ էության Իրանը միակողմանիորեն բռնում էր Ադրբեջանի կողմը, հայկական կողմից պահանջելով առանց որևէ նախապայմանի դուրս գալ գրավված տարածքներից: Սակայն մեր կարծիքով, 1993թ. ամռանը Թեհրանի քաղաքականության մեջ նկատվեց որոշակի շրջադարձ: Թեև իրանական դիվանագիտությունը շարունակում էր գործածության մեջ թողնել միջազգային սահմանների անխաթար պահպանման վերաբերյալ իր բանաձևը, սակայն այլևս Ղարաբաղի և Հայաստանի հասցեին չէին օգտագործվում կոշտ արտահայտություններ: Ավելին, շրջանառության մեջ դրվեցին հետևյալ ձևակերպումները. «Իրանը հանդես է գալիս խնդրի արագ, արդար և խաղաղություն երաշխավորող կարգավորման կողմնակից», կամ «այդ զգայուն խնդիրը պետք է լուծում ստանա տարածաշրջանի անվտանգության, երկու երկրների շահերի շրջանակում՝ խաղաղ ձևով»:

Անշուշտ մոտեցումների այս փոփոխության մեջ իր դերակատարությունն ուներ Իրան-Ադրբեջան հարաբերությունների հարաճուն բարդացումը, եթե չասենք սրումը: Ուշագրավ է նաև նշել, որ անհրաժեշտութ-

յան դեպքում Թեհրանը չէր խորշում դարաբաղյան հարցը օգտագործել իր հակաադրբեջանական քարոզչության մեջ, իսկ առանձին դեպքերում նույնիսկ Ադրբեջանի վրա ճնշում գործադրելու համար: Ավելորդ չէ այդ առթիվ բերել հետևյալ փաստը. 1997թ. դեկտեմբերի 4-11ին Թեհրանում տեղի ունեցած Իսլամական Կոնֆերանս կազմակերպության /OIC/ 8-րդ գագաթաժողովի ժամանակ իսլամական մի շարք պետությունների ջանքերով դարաբաղյան հիմնահարցը ոչ միայն մտցվեց գագաթաժողովի օրակարգ, այլև այդ հարցի կապակցությամբ ընդունվեց հատուկ քաղաքական բանաձև, որը դատապարտում էր «Հայաստանի ագրեսիան» Ղարաբաղի դեմ և որոշում էր Ադրբեջանին ցուցաբերել տնտեսական համակողմանի օգնություն: Սակայն այդ ոչ հայանպաստ որոշումն արժանացավ Իրանի կտրուկ հակազդեցությանը: Գագաթաժողովում ԻԻՀ ներկայացուցիչը ունեցավ հատուկ ելույթ, որտեղ վերոհիշյալ բանաձևը ի չիք դարձնելու նպատակով շեշտը դրեց Բաքվի ու Իսրայելի միջև սերտ հարաբերությունների խնդրի վրա:[31] Այդ ելույթը դրական արձագանք գտավ արաբական երկրների և մի շարք այլ իսլամական պետությունների ղեկավարների մոտ, որի հետևանքով վերոհիշյալ քաղաքական բանաձևը էապես խմբագրվեց, մեծ հիասթափություն առաջ բերելով ադրբեջանական պատվիրակության և նրա ղեկավար Հ. Ալիևի մոտ:

Իրանը սովորաբար դրվատանքով է արտահայտվում Ղարաբաղի հարցի շուրջը ձեռք բերված զինադադարի պահպանման հարցում Հայաստանի որդեգրած դիրքորոշման նկատմամբ, դրա մեջ տեսնելով «հստակ քաղաքական կամք»: Թեհրանում գոյություն ունի կայուն համոզմունք այն մասին, որ Ղարաբաղում զինադադարի խախտումը և հայադրբեջանական զինված առճակատման շարունակումը ոչ միայն թույլ կտա օտարերկրացիներին միջամտելու տարածաշրջանի գործերին, այլև կնպաստի այն բանին, որ Ադրբեջանը էլ ավելի սերտ կապերով կապվի ԱՄՆ-ի և Թուրքիայի հետ: Այդ իսկ տեսակետից Թեհրանը խիստ քննադատական վերաբերմունք է դրսևորում միջազգային-քաղաքական բնույթի իրադարձությունները Բաքվի կողմից շահարկելու և սադրիչ գործողություններ իրականացնելու վարքագծի դեմ: Իրանական «Ամու-Դարյա» ամսագրի խմբագիր Նասեր Մաղաֆի Ամերին գտնում է, օրինակ, որ Սիացյալ նահանգների ձգտումը համաշխարհային կարգը իր օգտին փոխելու ուղղությամբ, որը վառ կերպով դրսևորվեց Կոսովոյի խնդրի ժամանակ, Ադրբեջանը վարձում էր օգտագործել որպես լծակ Հայաստանի հետ իր կոնֆլիկտների ընթացքում: Նրա կարծիքով դա վերին աստիճանի վտանգավոր խաղ է, որը կարող է ծառայել որպես սկիզբ Կովկասի, Մերձավոր ու Միջին արևելքի տարածաշրջանում խոշոր կոնֆլիկտների համար:[32]

Իրանի և Ադրբեջանի միջև առկա կոնֆլիկտային պոտենցիալը ունենում է պոռթկումներ ամենատարբերեր հարցերի կապակցությամբ: Դրա պատճառը կայանում է նրանում, որ այդ երկու պետությունների հարաբերությունների ողջ պատմությունը ունեցել է ճգնաժամային բնույթ: Ամենատարբեր առիթներով նրանք մշտապես մեղադրում են մեկը մյուսին: Այսպես, ԹՈՒՐԱՆ տեղեկատվական գործակալության վերլուծական ծառայության ղեկավար Հ.Կուլիևը գտնում է, որ «Իրանը աշխարհաքաղաքական առումով շահագրգռված է նրանում, որ իրադրությունը Ադրբեջանում մշտապես վատանա»:[33] Իսկ Թեհրանը մեծագույն անհանգստությամբ ընդունեց այն լուրերը, որ Բաքուն պատրաստվում է միանալու Թուրքիա-Իսրայել ռազմական համագործակցությանը: Իրանի արտաքին գործոց նախարարության կարծիքով Ադրբեջանը ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի, Իսրայելի և Թուրքիայի համար ճանապարհ է բաց անում դեպի տարածաշրջան, որը սպառնալիք է Իրանի ազգային անվտանգության համար:

Իրանի և Ադրբեջանի միջև միջպետական հակասության գլխավոր պատճառներից մեկը, որն ընդորում ունի մշտական բնույթ, դա Իրանական Ադրբեջանի «բռնազավթված տարածքների» խնդիրն է: Ժամանակակից Ադրբեջանում պաշտոնապես տիրապետող է այն տեսակետը, որ պատմականորեն գոյություն ունի միայն միացյալ Ադրբեջան, որը մասնատվել ու բաժանվել է մասերի: Ընդորում, հենց ինքը, Հ.Ալիևը ևս - տուրք տվեց ազերի ազգայնականների այդ մտայնությանը, այն տարբերությամբ, որ «Իրանական Ադրբեջան» տերմինը նա վտխարինեց «Հարավային Ադրբեջանով»:[34]

Դեռևս Նախիջևանի Ինքնավար հանրապետության Գերագույն մեջլիսի նախագահի պաշտոնը զբաղեցնելիս, նրա նախաձեռնությամբ 1991թ. դեկտեմբերի 16-ին որոշում ընդունվեց յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի օրը հայտարարելու տոն՝ «Ամբողջ աշխարհի ազերիների համերաշխության օր»: Հետագայում Ադրբեջանի նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո նրա աշխատակազմի հասարակական-քաղաքական բաժնի կողմից կազմակերպված «Աշխարհի ազերիները. պատմա-քաղաքական գործընթացներ, արդի ժամանակաշրջան» անվան տակ գումարված խորհրդաժողովում ելույթ ունեցած հռետորները խոր ցավ էին հայտնում, որ ազերիները անկախ պետություն են կերտել միայն Ադրբեջանի «պատմական տարածքի» մի վաքր մասում:[35]

Ադրբեջանի հանրապետությունում զգալի թվով քաղաքական ուժեր համակրանքով են վերաբերվում «Հյուսիսային և Հարավային Ադրբեջանների միավորման» ուտոպիական գաղափարի նկատմամբ: Թեև պաշտոնական մակարդակով աշխատում են դա չշեշտադրել, սակայն առիթը բաց չեն թողնում հայտարարելու, որ այդ հարցը առկա է իրենց

քաղաքական ծրագրերում և բարենպաստ իրադրության պայմաններում նրան կհաղորդվի հրատապություն: Սի շարք կուսակցություններ, օրինակ, («Անա վաթան», «Մուսավաթ» և այլն) պարբերաբար փորձում են աշխարհի հասարակայնությանը հասցնել Իրանում ադրբեջանցիների «ազգային իրավունքների ոտնահարման» մասին տեղեկություններ: Այլ կերպ ասած, Բաքուն սքողված ձևով խրախուսում է պանազերիական ազգայնականությունը: Հ.Ալիևի քաղաքական խորհրդական Վաֆա Գուլուզադեն Ջորջ Վաշինգտոնի անվան ինստիտուտում կայացած միջինարևելյան քաղաքականությանը նվիրված գիտաժողովում ընդգծել է. «25 միլիոն ազերի բնակիչ ունեցող Իրանը սարսափում է սահմանակից հզոր և անկախ Ադրբեջանից, քանի որ Իրանի ազերիների շրջանում օր օրի ուժգնանում են ազգայնական տրամադրությունները: Թեև Բաքուն չի կարող պաշտոնապես պահանջել երկու Ադրբեջանների միացումը, այնուամենայնիվ նրանք վաղ թե ուշ կմիանան»:[36]

Վաֆա Գուլուզադեն Հ.Ալիևի վարչակարգի անդամներից միակը չէր, որ իրեն թույլ էր տալիս նման ոևանշիսաական արտահայտություններ: Իշխանությունների թողտվությամբ Բաքվում ակտիվորեն գործում էր այսպես կոչված «Հարավային Ադրբեջանի ազգային-ազատագրական շարժման» կենտրոնակայանը, իսկ իբր «վտարանդի» Ադրբեջանի էմիսարները հրահրիչ գործունեություն էին ծավալել Հյուսիսային Իրանում, ձգտելով ապակայունացնել թուրքալեզու հոծ բնակչություն ունեցող այդ երկրամասը: 1999թ. օգոստոսին Հ.Ալիևը ստորագրեց հրամանագիր իրանական ազերիների վերոհիշյալ անջատվողական կազմակերպության ղեկավարներից մեկին՝ Փիրուզ Դիլյանչիին, որը ձերբակալման վտանգից խուսափելով փախել էր Իրանական Ադրբեջանից և Բաքվից խնդրել քաղաքական ապաստան, Ադրբեջանի քաղաքացիություն տրամադրելու վերաբերյալ: Իսկ նույն թվականի սեպտեմբերին Ադրբեջանի պետական հեռուստատեսությունը եթեր տրամադրեց Իրանական Ադրբեջանից փախած այլախոհ պրոֆեսոր Մ.Չեհրաղանիին:[37] Սի շարք ավելի զգույշ ազերի քաղաքական դեմքեր (օրինակ, «Միացյալ Ադրբեջան» կազմակերպության ղեկավարներից Փանահ Հուսեյինովը և ուրիշներ) վարձում են «Միացյալ Ադրբեջանը» ներկայացնել ոչ որպես քաղաքական նպատակ կամ «ազգային իդեա», այլ պարզապես զուտ գաղափարական սկզբունք: Ընդորում նրանք պնդում են, որ այն ուղղված չէ Իրանի դեմ, որ սասվել ևս չի կարելի այդ գաղափարն ընկալել որպես Իրանի ներքին գործերին միջամտություն, քանի որ այն ենթադրում է նախ և առաջ բոլոր ադրբեջանցիների ազգային, հոգևոր և բարոյական միասնության քարոզչություն:[38] Սակայն «Միացյալ Ադրբեջանի» ծայրահեղական թևը իր մամուլի միջոցով Իրանական Ադրբեջանի բնակչությանը հրահրում է դուրս գալ ազգային-ազատագրական պայքարի: Այդ թևին

պատկանող ազգայնականները ժամանակ առ ժամանակ Բաքվում ԻԻՀ դեսպանության շենքի մոտ կազմակերպում են բողոքի ցույցեր, հանրահավաքներ և այլն:

Դեռևս 1990թ. ազերի պանթյուրքիստների կողմից Թավրիզում ստեղծված «Հարավային Ադրբեջանի ազգային-ազատագրական շարժում» կազմակերպությունը իր ներկայացուցչություններն է բացել նաև Եվրոպայում, Կանադայում և այլ վայրերում:[39] Վերջին տարիներս հիշյալ կազմակերպությունը ավելի ու ավելի բարձրաձայն հիշեցնում է իր գոյության մասին: Այսպես, Բաքվի ՁԼՄ-ների հաղորդման համաձայն, Թավրիզում տեղի էր ունեցել մի հանրահավաք, որի մասնակիցները բողոքում էին Ֆրանսիայի խորհրդարանի կողմից 1915թ. արևմտահայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու որոշման դեմ: Հանրահավաքում կոչեր էին հնչում խզելու բոլոր տեսակի հարաբերությունները հայերի և «բոլոր նրանց հետ, ովքեր հովանավորում են նրանց»: 1999թ. փետրվարի 26-ին նույն կազմակերպության կողմից Թավրիզում գումարված հանրահավաքը ընթանում էր հետևյալ կարգախոսների ներքո. «Թավրիզը մերը կլինի», «Կորչի ֆարսերի շովինիզմը»: Հատկանշական է, որ նման բոլոր հանրահավաքների ժամանակ պարտադիր կարգով հնչում են հակահայկական կոչեր:[40]

Ուշագրավ է, որ Բաքվի քաղաքական շրջաններում նման իրադարձություններն արժանանում են հիացական գնահատականների: Ընդորում դրանք մեկնաբանվում են այն իմաստով, որ իրանական ազերիները «իրենց աշխարհաքաղաքական դիրքորոշումները համապատասխանեցնում են ոչ թե Թեհրանի, այլ Բաքվի և Անկարայի շահերին»:[41]

Ադրբեջանի կողմից քաղաքական շահարկումների առարկա է հանդիսանում նաև Իրանում ազերիների թվի հարցը: Մի շարք ադրբեջանցի գիտնականներ պնդում են, որ աշխարհում ազերիների թիվը հասնում է 40 միլիոնի: Ադրբեջանի նախկին արտգործնախարար Նազար Նազարովը անգլիալեզու «Transitions» ամսագրի հետ ունեցած իր հարցազրույցում պնդում էր, որ այդ 40 միլիոն ազերիներից Իրանում բնակվում են 20-ից մինչև 30 միլիոն մարդ:[42]

Բազմաթիվ փաստեր վկայում են այն մասին, որ Բաքվի իշխանությունները փորձում են միջազգայնացնել «Սիացյալ Ադրբեջանի» հարցը: Հենց այդ նպատակով 1997թ. Լոս-Անջելեսում գումարվեց «Համայն աշխարհի ադրբեջանցիների առաջին համաշխարհային վեհաժողովը»: Այնուհետև այն դարձավ շարունակական: Երկրորդ վեհաժողովը գումարվեց 1998թ. մայիսի 30-31-ին Վաշինգտոնում, իսկ մեկ տարի անց՝ 1999թ. Քյոլնում տեղի ունեցավ թվով երրորդ վեհաժողովը: Այդ հավաքների ժամանակ, հատկապես Ադրբեջանի հանրապետության պատվիրակների կողմից կատարվում էին հարցադրումներ այն ոգով, որ Իրանը

պարտավոր է որպես առաջին քայլ «Հարավային Ադրբեջանին» տրամադրել ինքնավարություն, որի պարտադիր պայմաններից է լինելու ուսուցումը մայրենի լեզվով, թերթերի և գրքերի հրատարակությունը ազերի լեզվով, մշակութային կենտրոնների բացումը և այլն:[43] Քյոլնում բացահայտ հակահիրանական դիրքորոշմամբ հադես եկավ ԻԻՀ-ում Ադրբեջանի նախկին դեսպան Ալիյար Սաֆարլին: Նա հայտարարեց, որ անհրաժեշտ է Ադրբեջանում ստեղծել աշխարհի բոլոր ադրբեջանցիների համախմբման հոգևոր կենտրոն, ինչպես նաև հատուկ ֆոնդ «միացյալ Ադրբեջանի» ստեղծման գաղափարը կյանքի կոչելու համար: Այդ նույն համաժողովում հանդես եկած «Ազերիների համաշխարհային կոնգրեսի» ղեկավարներից մեկը՝ Թեյմուր Էմինբեյլին բացահայտեց նաև գործողությունների այն մեխանիզմը, որը նրա կարծիքով ի վիճակի էր իրողություն դարձնել «միացյալ Ադրբեջանի» ծրագիրը: Առաջին էտապում նա անհրաժեշտ էր համարում «ազգային կառավարության վերականգնումը Հարավային Ադրբեջանում», այսինքն պետականության ստեղծումը, իսկ երկրորդ էտապում պետք է գործողության մեջ մտներ Հարավի և Հյուսիսի միավորումը:[44]

1999թ. օգոստոսին «Ադրբեջանցիների համաշխարհային կոնգրեսի» կազմկոմիտեի նախագահ Բուլուդ Ղարափափախը և պրոֆեսոր Ալիրզա Նազմիի «լիազոր ներկայացուցիչ» Ջավադ Իսմայիլին ստեղծեցին մի նախաձեռնող խումբ Ադրբեջանի խորհրդարանում Հարավային Ադրբեջանի օրենսդրական մարմին՝ «Հարավային Ադրբեջանի խորհրդարան» ձևավորելու հեռահար նպատակով:[45]

Ավելորդ չէ նշել, որ «Միացյալ Ադրբեջանի» ջատագով ազերի ազգայնականները արևմուտքում «Մեծ Ադրբեջանի» սահմանները հասցնում են մինչև Սևանա («Գեյչա») լիճը, իսկ հյուսիսում՝ մինչև Դերբենտ:

1998թ. հունվարի 30-31-ին «Ադրբեջանի ժողովրդական ճակատ»կուսակցության II (V) համագումարում Թուրքիայից հրավիրված ներկայացուցիչները հայտարարեցին, որ Աբուլֆազ Էլչիբեյը «թյուրքական աշխարհի առաջնորդն է և նոր առասպելական Ալփարսլան Թյուրքեշը»:[46] Այդ հաճոյախոսություններից ոգևորված Էլչիբեյը առաջարկեց նոր ստեղծվելիք պետության՝ «Միացյալ Ադրբեջանի» մայրաքաղաք հռչակել Թավրիզը: «Եթե մենք չկարողանանք լուծել Թավրիզի պրոբլեմը (իմա՝ «Միացյալ Ադրբեջանի» ստեղծումը Վ.Բ.), մեզ չի հաջողվի վերադարձնել Լեռնային Ղարաբաղը: Ես գանում եմ, որ այդ երկու խնդիրները սերտորեն փոխկապակցված են»,- հայտարարեց Ա.Էլչիբեյը:[47]

Առհասարակ թե՛ իր նախագահության շրջանում և թե՛ հետագայում, երբ Էլչիբեյը ծվարեց Նախիջևանի գյուղերից մեկում, նա իր ռազմաշունչ-ռևանշիստական ելույթների ժամանակ բազմիցս սպառնում էր ջախջախել Իրանը: [48] Իր հանդուգն ագրեսիվությամբ նրանից հետ չէր

մնում նաև վերևում հիշատակված Ալիյար Սաֆարլին, որը Թեհրանում որպես դեսպան պաշտոնավարելիս իրեն թույլ էր տալիս վիրավորական արտահայտություններ Իրանի և նրա քաղաքական գործիչների հասցեին:[49] Իսպառ կորցնելով չափի զգացումը և չկարողանալով սանձահարել իր հիվանդագին երևակայությունը, Սաֆարլին պնդում էր, որ իր տեղեկությունների համաձայն, գոյություն ունի Իրանի տարածքից զինված ջոկատների ներխուժման պլան Ղարաբաղ: Որ իբր այդ ջոկատները բաղկացած են հատուկ ճամբարներում մարզված Բաքվի նկատմամբ ադրբեջանական անհաշտ ընդդիմության ուժերից: Հայաստանը իբր պատրաստ է Ղարաբաղի գրավյալ շրջանների մի մասը հանձնել այդ ջոկատներին, որպեսզի սանձազերծի զինված կոնֆլիկտ վերջիններիս և Բաքվի իշխանությունների միջև, այսինքն հրահրի քաղաքացիական պատերազմ, որը Իրանին հնարավորություն կտա միջամտելու Ադրբեջանի ներքին գործերին:[30]

Ալիյար Սաֆարլիի այդ սադրիչ գործունեությունը լցրեց Թեհրանի համբերության բաժակը և նա ստիպված եղավ Բաքվից պահանջել, որ հետ կանչի իր դեսպանին: Այդ անհաջողակ դիվանագետը վերադարձից հետո ստանձնելով Բաքվի պետական համալսարանի պրոֆեսորի պաշտոնը, լծվեց էլ ավելի բուռն հակահիրանական քարոզչության, պնդելով, որ Իրանը չի ցանկանում, որ Ադրբեջանը դառնա ուժեղ պետություն, որ իրանցիները Ադրբեջանում վարում են քայքայիչ աշխատանք, ձգտելով այնտեղ իրենց համար ստեղծել «հինգերորդ զորասյուն» և այլն:

Ընդհանրացնելով վերևում շարադրվածը, հարկ ենք համարում շեշտել, որ այսպես կոչված «Հյուսիսային և Հարավային Ադրբեջանների միավորման» հարցադրումը ոչ մի ռեալ հիմք չունի: Ատրպատականի ազգերի բնակչությունը իր հոգեկան կերտվածքով, հայրենիքի մասին իր մոտեցումներով և այլն էապես տարբերվում է Ադրբեջանի Հանրապետության ազգերի բնակչությունից: Նա իրեն համարում է համաիրանական քաղաքական ընդհանրության անբաժանելի մասը և իր մեծ մասով հակված է այն տեսակետին, որ հենց «մայր հայրենիքից»՝ Իրանից, կտրված Ադրբեջանի ազգերի «եղբայրներն ու քույրերը» իրենք պետք է միանան Իրանին և դառնան իրանական պետականության անբաժանելի մասը: 1997թ. հունիսի 28-30-ը Լոս-Անջելեսում տեղի ունեցած «Համայն աշխարհի ազերիների համագումարը», հակառակ պանթյուրքիստների ու Բաքվի վարչախմբի սպասելիքների արձանագրեց, որ Արաքսից այն կողմ գտնվող Ադրբեջանը (իմա՝ Ադրբեջանի Հանրապետությունը-Վ.Բ.) ինքը պետք է միավորվի Իրանի հետ: Ի դեպ, Ադրբեջանի Հանրապետությունում առկա են նաև քաղաքական գործիչներ, որոնք գտնում են, որ քաղաքական առումով երկու Ադրբեջանների միավորումը մեկ ընդհանուր պետության մեջ նպատակահարմար չէ: Ուստի նրանք առաջ են

քաշում այդ հարցի լուծման հետևյալ բանաձևը. «մեկ ժողովուրդ՝ երկու պետություն»:

Ինչպես տեսնում ենք, թեև նվաղուն ձևով, սակայն ադրբեջանական իրականության մեջ հնչում են նաև այլ ձայներ: Այդ ստումով ուշագրավ է նաև հետևյալ փաստը. «Մոնիթոր» ամսագրի 1998թ. 1/12 համարում տպագրվել էր Էլմար Հուսեյինովի (որը միաժամանակ ամսագրի գլխավոր խմբագիրն էր) «Ադրբեջանցիներ՝ 21-րդ դարի ազգ» խոսուն վերտառությամբ հոդվածը: Նրանում հեղինակը առաջ էր քաշում այն տեսակետը, որ ադրբեջանցիները որպես ազգ ամբողջությամբ վերցրած դեռևս չեն ձևավորվել, ինչպես նաև տակավին զուրկ են ազգային գաղափարից: Հոդվածագիրը այնուհետև նշում էր, որ ադրբեջանցիները ունակ չեն ինքնաքննադատության, ուստի և ընդունակ չեն կյանքի կոչելու ռազմավարական և մարտավարական խնդիրներ, որ նոր դարաշրջանի շեմին ազգի մոտ բացակայում է սեփական մտավորական էլիտան, միաժամանակ Ադրբեջանում տեղի է ունեցել ռուսալեզու մտավորականության դուրս մղում մի կողմից՝ և Հայաստանից եկած ադրբեջանցիների լումպենիզացում՝ մյուս կողմից: Այդ բոլորի հանրագումարում Է.Հուսեյինովը կասկածի տակ էր դնում ադրբեջանցիների ընդունակությունը պահպանելու անկախ պետականությունը: Հոդվածագիրը զարգացնում էր նաև այն միտքը, որ հենց Իրանում է, որ պահպանվել է ադրբեջանցիների էթնոգենոֆոնդը, այնտեղ է գտնվում իսկական ադրբեջանական էլիտան, որը հանդես է գալիս հօգուտ իրանական պետականության: Որ գոյություն ունի էական տարբերություններ հյուսիսային և հարավային ադրբեջանցիների միջև, ընդորում հյուսիսային ադրբեջանցիներին նա բնորոշում է որպես «քոչվորական-վաչկատուն» ժողովուրդ:

Հիշյալ հոդվածը վայնասուն առաջ բերեց Բաքվում: Է.Հուսեյինովը դատի տրվեց «ադրբեջանական ժողովրդի պատվին ու արժանապատվությանը վիրավորանք հասցնելու» մեղադրանքով: Դատարանը որոշեց պատժել հոդվածագրին, նրանից գանձելով 16 միլիոն մանաթի չափով խոշոր տուգանք:[51]

Բնական է, որ Թեհրանի ռեակցիան Բաքվի կողմից ստաջ քաշվող «Միացյալ Ադրբեջանի» սադրանքի նկատմամբ խիստ բացասական ու ջղային է: «Թյուրքական հարցը» (Իրանում պաշտոնապես ազերիներին անվանում են թյուրքեր)[52] իրանական կառավարության համար ազգային հարցի համատեքստում ամենասուր պրոբլեմներից մեկն է հանդիսանում: Առավել ևս, որ որոշ փորձագետներ այն տեսակետն են հայտնում, որ եթե երբևիցէ ԱՄՆ-ը որոշեն մասնատել ու տրոհել Իրանը, դրան հասնելու լավագույն ձևերից մեկը կարող է հանդիսանալ Իրանական Ադրբեջանի անկախության հռչակումը և նրա անջատումը Թեհրանից:[53] Իրանը չի կարող նաև չանհանգստանալ, որ Ադրբեջանում գոյութ-

յուն ունեցող աշխարհիկ վարչակարգը կարող է վարակիչ լինել սահմանի մյուս կողմի էթնիկական ազերիների համար: Այլ կերպ ասած, Թեհրանը չի կարող մտավախություն չունենալ, որ անկախ Ադրբեջանը կարող է հանդիսանալ իրանական ազերիներին իրեն ձգող մի մագնիս: Ուստի Իրանը մշտապես ստիպված է լուրջ քայլեր ձեռնարկել խոչընդոտելու համար հյուսիսից «թափանցումներն» Իրանական Ադրբեջան: Այդ մտավախությունը հավասարապես վերաբերվում է նաև Թուրքիայի քարոզչական գործունեությանը այդ երկրամասում: Առհասարակ Իրանի համար մղձավանջ է Բաքվի և Անկարայի կողմից քողարկված ձևով մղվող քարոզչությունը «Մեծ Ադրբեջան» ստեղծելու վերաբերյալ: Թեհրանում հավատացած են, որ Ադրբեջանի հակաիրանական քաղաքականությունը իրագործվում է Թուրքիայի դրդմամբ: Ուստի Թեհրանը աչալուրջ կերպով հետևում է, որպեսզի դրսից երկրի անվտանգությանը և կայունությանը սպառնացող գաղափարներ չներթափանցեն Իրանական Ադրբեջան: Ի պատիվ իրանական կառավարությանը պետք է ասել, որ նա կարողանում է իրականացնել Ադրբեջանում կենտրոնախույս միտումների բանական զսպման քաղաքականություն:[54] Եվ դա կատարվում է ոչ թե բռնի ուժով, այլ շրջահայաց ու խոհեմ քաղաքականության միջոցով: Ազերիների ներկայացուցիչներն, օրինակ, մուտք ունեն իշխանության բարձրագույն էշելոնները: Բազմաթիվ հանգուցային պաշտոններ զբաղեցնում են նրանք:[55] Ավելորդ չէ նշել, որ Իրանի ներկայիս կրոնապետ-առաջնորդ այաթոլլահ սեյյեդ Ալի Խամենեյին ևս, որի ձեռքերում կենտրոնացված է վիթխարի ռազմական, վարչական և քաղաքական իշխանությունն, նույնպես ազերի է: Բաքվի կողմից առաջ քաշվող «երկու Ադրբեջանների» միավորման կոչի նկատմամբ որպես հակաքայլ, Իրանը ոչ պաշտոնական ձևով, մամուլի էջերում և այլն քարոզչություն է մղում «Թուրքմենչայի պատմական անարդարությունը վերանայելու», Անդրկովկասի «իրանական հողերը», մասնավորապես Ադրբեջանի տարածքները «հզոր ու բարգավաճ իսլամական Իրանին» վերադարձնելու, Ադրբեջանը իր «պապենական հայրենիքի՝ Իրանի հետ միավորվելու» վերաբերյալ և այլն:

Երկու Ադրբեջանների միջև սերտ էթնոմշակութային ու քաղաքական կապերի խափանման շահերից ելնելով, հակառակ Բաքվի համառ պնդումներին, Թեհրանը այդպես էլ իր համաձայնությունը չտվեց, որպեսզի Թավրիզում բացվի Ադրբեջանի գլխավոր հյուպատոսություն: Ի դեպ, հավասարակշռությունը պահելու շահերից ելնելով մերժվեց նաև Հայաստանի Հանրապետության առաջարկը այդ նույն քաղաքում բաց անելու գլխավոր հյուպատոսություն:

Իրան-Ադրբեջան հարաբերությունների լարվածությունը միտումնավոր ու գիտակցված ձևով խրախուսվում է Բաքվի կողմից: Ադրբեջա-

նի Ազգային անվտանգության նախարարությունը ժամանակ առ ժամանակ տեղեկություններ է հրապարակում Ադրբեջանի դեմ իրանական քաղաքացիների կողմից լրտեսական գործունեություն ծավալելու մասին,[56] մամուլում հաճախ նյութեր են հրապարակվում, որ Ադրբեջանում իրանական հատուկ ծառայությունները ստեղծել են գործակալական լայն ցանց,[57] հատկապես հավաքագրելով ընդդիմադիր գործիչների: 1999թ. հոկտեմբերին, օրինակ, վկայակոչելով Գերմանական «Ռայն Պֆալց» թերթի հոկտեմբերի 21-ի հրապարակումը, «Բակինսկի Ռաբոչի» պաշտոնաթերթում հրապարակվեց հաղորդում այն մասին, որ իբր նշված թվականի հունիսին Թեհրանում, Ազգային անվտանգության նախարարությունում («վեզարաթ-ե էթթելաաթ»), տեղի են ունեցել երեք գաղտնի հանդիպումներ, որոնց մասնակիցների թվում հիշատակվում են Մահիր Ջավադովը[1] և Ադրբեջանի նախկին նախագահ Այազ Մութալիբովը: Այդ հանդիպումների ժամանակ իբր քննարկվել են Ադրբեջանի կառավարության դեմ նախապատրաստվող զանազան ծրագրեր՝ կովկասյան տարածաշրջանում ԱՄՆ-ի և Թուրքիայի աճող ազդեցությանը հակադարձելու նպատակով:[58]

Իրան-Ադրբեջան հարաբերությունները մթագնող մյուս պրոբլեմը դա իսլամական կրոնի հետ կապված խնդիրներն են: Ինչպես հայտնի է, խորհրդային վարչակարգի կողմից տևական ժամանակաշրջանի ընթացքում ճնշման տակ գտնված իսլամը Ադրբեջանի անկախության ձեռք բերումից հետո սկսեց վերածվել ազգային ինքնությունը շեշտադրող հարմար խորհրդանիշի: Ըստ այնմ, Իրանը մեծ հույսեր սկսեց կապել Ադրբեջանի հետ իր կոնֆեսիոնալ միասնության հետ, մանավանդ որ Հ.Ալիևը ժամանակ առ ժամանակ հաճոյախոսություններ էր կատարում իսլամի հասցեին, հայտարարելով, որ ինքը Խորհրդային Միության ղեկավարության մեջ (որպես քաղբյուրոյի անդամ) միակ մահմեդականն էր:[59] Նա ցուցադրական ձևով հաճախ մասնակցում էր նոր կառուցված մզկիթների բացման արարողություններին, իսկ մեկ անգամ նույնիսկ հայտարարեց, որ «միմյանց այնքան նման ոչ մի ուրիշ երկիր չկա, որքան Իրանն ու Ադրբեջանը»:[60]

Այս բոլորը Թեհրանին հիմք էր տալիս ենթադրելու, որ Ադրբեջանում հնարավոր կլինի վերակենդանացնել «ումմայի» և մահմեդական եղբայրության գաղափարները, որոնք կարող էին հոգեկան կովան հանդիսանալ նրանց մերձեցման համար:[61]

---

[1] 1995թ. մարտին Բաքվում Հ.Ալիևի իշխանության դեմ զինված ելույթ կազմակերպած Ջավադով եղբայրներից մեկը, որը Ադրբեջանից փախուստի դիմելուց հետո ընդունել էր ավանդական հպատակություն և որպես քաղաքական վտարանդի գտնվում էր Իրանում:

Անշուշտ Ադրբեջանի հետ իրենց հարաբերությունների սկզբունքները մշակելիս Թեհրանում իրենց հաշիվ էին տալիս, որ իսլամական հեղափոխության արտահանումը Ադրբեջան և այնտեղ իսլամական արմատականության քարոզչության ծավալումը կարող է լինել անհեռանկար ու անհեռատես քաղաքականություն, որովհետև այն կարող է առաջ բերել Բաքվի աշխարհիկ ղեկավարության հակազդեցությունը և տեղիք տալ այդ երկրի ապակայունացմանը, որի վտանգավոր ալիքները կարող էին անցնել Արաքսը և թափանցել Իրանական Ադրբեջան: Ուստի իրանական դիվանագիտության մարտավարությունը ուղղված էր նրան, որ Ադրբեջանում Իրանը աստիճանաբար մուտք գործի համագործակցության ամենաբազմապիսի բնագավառները, աշխատելով քայլ առ քայլ շահել այդ երկրի մահմեդական բնակչության համակրանքը:[՝՝] Սակայն ի հիասթափություն Թեհրանի, կոնֆեսիոնալ միասնության գործոնը չաշխատեց: Նախ պարզվեց, որ Ադրբեջանում իսլամական գործոնի խորը ընկալման համար բավարար հող գոյություն չունի: Այդ առթիվ Բաքվում ԻԻՀ դեսպան Ա. Բիգդելին իր մամուլի ասուլիսներից մեկում հայտարարել էր, որ «Ադրբեջանում գոյություն ունեն բոլշևիկյան գաղափարախոսության մնացուկներ»: Այնուհետև Ադրբեջանի հանրապետությունում ընդունված նոր սահմանադրությամբ երկիրը հայտարարվեց լայիք /աշխարհիկ/ պետություն, կրոնը համարվեց պետությունից անջատ և բացառվեց Ադրբեջանում իսլամական պետական ինստիտուտների առկայությունը: Այդ փաստը ի դերև հանեց Թեհրանում փայփայվող այն երազանքը, որ Ադրբեջանը կընդունի ոչ թե թուրքական լայիք, այլ իրանական իսլամական մոդելը: Սահմանադրության մեջ լայիք համակարգի սկզբունքների որդեգրումը Թեհրանում ոչ առանց հիմքի ընկալվեց որպես Թուրքիայի հետ տնտեսական և քաղաքական ինտեգրացման ձգտում, որը ԻԻՀ մեկնաբանությամբ անմիջականորեն ուղղված է տարածաշրջանում Իրանի ռազմավարական շահերի դեմ: Ուստի Թեհրանը փորձեց Ադրբեջանում շրջանառության մեջ դնել ազգայնականության կոնֆեսիոնալ տարբերակը, որը նույնպես չաշխատեց:

Թեհրանի համար անսպասելի էր նաև Ադրբեջանում «Իսլամական կուսակցության» գործունեության կասեցումը, իսլամամետ գործիչների ձերբակալությունները, իսլամակպն ակտիվիստների նկատմամբ կիրառվող հալածանքները և այլն: Ոչ պակաս անսպասելի էր նաև այն, որ ընդհանուր առմամբ Հ. Ալիևի վարչակարգին հաջողվում է բնակչության քաղաքական եռանդը մղել որոշակի, իր համար ցանկալի հունով և իսլամական կրոնն օգտագործել որպես զանգվածներին ակտիվացնելու վստահելի միջոց՝ նրանց ակտիվությունը ի հարկին օգտագործելու համար:Թեհրանում զայրույթի վաթորիկ առաջ բերեց Ադրբեջանի կառավարության կողմից «Իսլամական կուսակցության» մի քանի անդամ-

ների նկատմամբ ներկայացված մեղադրանքը Թեհրանի օգտին լրտեսություն անելու մեջ: 1996թ. վերջին Բաքվում տեղի ունեցավ այդ կուսակցության ղեկավարների դատավարություն, որոնց դատապարտեցին տարբեր ժամկետների ազատազրկման: Թեև քիչ անց նախագահ Հ. Ալիևը «մեծահոգաբար» ներում շնորհեց նրանց, սակայն դրանից հետո ևս կուսակցության նախագահ Ալիքրամ Ալիևը, նրա տեղակալ Հաջիաղա Նուրիևը և ուրիշներ շարունակում էին գտնվել խիստ հսկողության տակ: Ի դեպ, սրանց ազդեցության ներքո գտնվող Նարդարան գյուղը բացահայտ առճակատման մեջ է գտնվում Հ. Ալիևի վարչակարգի հետ, որը հաճախ վեր է ածվում նաև զինված ընդհարումների: Բանը հասել էր նրան, որ Նարդարանի բնակիչները գյուղի կենարոնական հրապարակում իրենց համար փորել էին գերեզմաններ և հայտարարել, որ պատրաստ են մեռնելու հանուն հավատի ու արդարության:[63] Այսպես կոչված «Հարավային Ադրբեջանի ազգային-ազատագրական շարժման» կողմից հրապարակված «Անաղմուկ պատերազմ» գրքույկում խոսվում էր այն մասին, որ Ադրբեջանի «Իսլամական կուսակցությունը» համագործակցում է Իրանի հատուկ ծառայությունների հետ, և որ իբր Իրանական ղեկավարությունը ծրագրեր ունի Ադրբեջանում իրականացնելու հեղաշրջում:[64]

Դժվար չէ նկատել, որ այս բոլորի մեջ Բաքվի իշխանությունները ուժգին կերպով ձգտում են որոնել իրանական հետք: Ուստի իսլամիստների ողջ գործունեությունը դրվեց Կովկասի մահմեդականների խոգևոր վարչության և նրա ղեկավար Ալլահշյուքուր Փաշազադեի անձնական հսկողության տակ:[65]

Բաքուն հատկապես վախենում է Իրանի տարածքից իսլամական արմատականության թափանցումից Ադրբեջան: Ադրբեջանի Եվրասատլանտյան կենտրոնի նախագահ Ասիմ Մոլլազադեն գրում է, որ 1993թ-ից սկսած Իրանը դեպի Ադրբեջան իսլամական արմատականության արտահանման վրա ծախսել է մոտ 46 միլիոն դոլար:[66] «Ենի Ազերբայջան», «Խալլ», «Ազերբայջան» և մի շարք այլ թերթեր հրապարակում էին հոդվածներ, որոնցում պնդում էին, որ Իրանը ֆինանսավորում է Ադրբեջանի ընդդիմադիր ուժերին ներքին քաղաքական իրադրության ապակայունացման նպատակով:[67]

Իրան-Ադրբեջան հարաբերությունների լարվածության մյուս գործոնը Կասպից ծովի կարգավիճակի հարցն է: Այդ պրոբլեմը բազմաբնույթ է և իր մեջ ներառում է ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական խնդիրների մի ամբողջ փունջ: Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցում Իրանի և Ադրբեջանի դիրքորոշումների մեջ առկա են էական տարբերություններ:[68] Իրանական տեսակետի համաձայն, Կասպիցը ընդհանուր լիճ է և հետևաբար ածխաջրածնային հարստություն-

ներն էլ ընդհանուր են: Ուստի Իրանի կողմից պարբերաբար ձեռնարկվում են որոշակի քայլեր, որոնց նպատակն է՝ թույլ չտալ առափնյա պետություններին սկսել վիճահարույց նավթահանքերի արդյունաբերական շահագործումը: Անկասկած Իրանի և Ադրբեջանի միջև առկա հակասությունները ի վերջո պայմանավորված են նավթային պայմանագրերում Իրանի անբավարար ներգրավվածությամբ: Օգտագործելով տարածաշրջանում իր ողջ ներուժը, Իրանը չի դադարեցնում պայքարը իր համար հնարավոր լավագույն «բաժանում» ապահովելու նպատակով: Հարցի մյուս կողմը կայանում է նրանում, որ թեև կասպիական նավթի արտահանման ամենահարմար տարանցիկ ենթակառույցները, ինչպես նաև հնարավորությունները, տնօրինում է հենց Իրանը, գլխավորապես ԱՄՆ-ի ջանքերով նա հետևողականորեն դուրս է մղվում կասպիական խաղերից: ԱՄՆ-ը հասկանալի պատճառներով դեմ է, որ կասպյան ավազանի էներգակիրները միջազգային շուկա հանվեն Իրանի տարածքով, Պարսից ծոցի վրայով, թեև այդ տարբերակը առևտրական տեսակետից ևս առավել նպատակահարմարն է,[69] որովհետև կարող է ապահովել կասպիականի նավթի և գազի ամենաարագ և կարճ ճանապարհով տեղափոխումը: Որքան էլ որ բարդ լինի գոյություն ունեցող, առաջարկվող և ենթադրվող նավթամուղների պատկերը, նրանք բոլորը անցնում են ոչ թե մեկ, այլ մի քանի երկրների վրայով: Այնպիսի տրոհված մի տարածաշրջանում, ինչպիսին կասպիականն է, դա առաջ է բերում համարյա անլուծելի պրոբլեմներ: Եվ միայն մեկ ուղեգիծը դեպի հարավ, դեպի Պարսից ծոց, անցնում է միայն մեկ երկրի՝ Իրանի տարածքով: Սակայն քաղաքական պատճառներով Վաշինգտոնը դեմ է այդ տեսակետին, ուստի մշակվեց Իրանը շրջանցող նավթատար և գազատար խողովակաշարքերի հայտնի Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նախագիծը՝ երեք միլիարդ դոլար արժողությամբ, որը Թուրքիային և ոչ թե Իրանին դարձնում է տարանցիկ տարածք, որի վրայով կասպիական նավթը պետք է հասցվի համաշխարհային շուկաներ:

Առհասարակ Իրանը չափազանց հիվանդագին կերպով է արձագանքում տարածաշրջանում Սիացյալ Նահանգների ակտիվության նկատմամբ: Իրանական մամուլը մշտապես զարգացնում է այն միտքը, որ Վաշինգտոնի համառ վարքերը ընդլայնելու իր ներկայությունը մերձկասպյան տարածաշրջանում ստեղծում է որոշակի լարվածություն և ապակայունացնում իրադրությունը:[70] Իրանում գտնում են, որ Պարսից ծոցից հետո Կասպից ծովի ավազանում ամուր ոտքի տեղ անելու խնդիրը ԱՄՆ-ի համար միշտ էլ եղել է «պատմական երազանք»: Թեհրանի համալսարանի պրոֆեսոր Հաֆեզնիյան գտնում է, որ ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանի և Կասպից ծովի տարածաշրջանի նկատմամբ իրագործվող քաղաքականության կապակցությամբ Իրանի համար ծա-

գել են մի շարք խնդիրներ, այդ թվում նաև անվտանգության պրոբլեմներ և Կասպից ծովի ավազանում կոնֆլիկտների ծագման հավանականության մեծացում:[71] Առհասարակ ԻԻՀ արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքներից մեկն այն է, որ պետք է պահպանվի առկա երկրաքաղաքական հավասարակշռությունը: Տարածաշրջանային երկրները չպետք է թույլ տան, որ արտաքին ուժերը միջամտեն ռեգիոնի երկրների ներքին գործերին, կամ վարձեն այս կամ այն ձևով որոշել տարածաշրջանի երկրների ապագա ճակատագիրը: Իրանը բնավ չի ցանկանում նաև իր սահմանների մոտակայքում տեսնել արևմտյան ընկերություններին: 1999թ. գարնանը ԱՄՆ-ում Ադրբեջանի հետ նոր նավթային պայմանագրերի ստորագրումից հետո Իրանի արտգործնախարարությունը հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որտեղ ասվում էր, որ ադրբեջանա-ամերիկյան նավթային համաձայնագրերը Թեհրանը համարում է ոչ լեգիտիմ:

1997թ. գարնանը ԻԻՀ ազդեցիկ քաղաքական գործիչներից մեկը՝ Մեջլիսի նախագահ Ալի Աքբար Նաթեղ Նուրին հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «Ադրբեջանի նախագահ Հ.Ալիևը պատմական սխալ է թույլ տալիս հիմքեր ստեղծելով ամերիկացիների միջամտության համար մերձկասպյան պետությունների գործերին»: Որպես պատասխան քայլ Վաֆա Գուլուզադեն կտրուկ արտահայտություններով հակադարձեց իրանական Մեջլիսի խոսնակին և Բաքուն իր «վճռականությունը» դրսևորելու համար հետաձգեց ԻԻՀ արտգործնախարարի տեղակալ Աբբաս Մալեքիի նախապես ծրագրված այցը Ադրբեջան:[72]

Իր հերթին ադրբեջանական կողմը զանազան մեղադրանքներ է ներկայացնում Իրանի հասցեին: Այսպես, վկայակոչելով Լոնդոնի «Թայմս»-ը, ադրբեջանական թերթերը Իրանին մեղադրում էին նրանում, որ իբր նա Կասպից ծովը օգտագործում է մեկ այլ երկրի սպառազինությունը Հայաստանին, քրդերին, բոսնիական սերբերին վախանցելու, ինչպես նաև սեփական նպատակների, մասնավորապես ստրատեգիական նշանակության հրթիռներ պատրաստելու բաղադրամասեր ստանալու համար: 1998թ. մարտի 26-ին Աստարայի մաքսատանը կալանքի տակ դրվեց Ռուսաստանից Իրան ուղարկվող մի բեռ 21,7 տոնն քաշով: Բեռի պարունակությունը չժանգոտվող մետաղաթերթեր էին: Ադրբեջանի Անվտանգության ծառայությունների կարծիքով, այդ ապրանքը նախատեսված էր հեղուկ վառելիքով աշխատող բալիստիկ հրթիռներ պատրաստելու համար: Բեռը կալանքի ենթարկելու հենց նույն օրը Ադրբեջանը այդ մասին տեղեկացրեց Վաշինգտոնին:[73] Անկասկած ադրբեջանական լրատվամիջոցների կողմից նման հրապարակումների նպատակը մեկն է՝ պետք է վախել Կասպից ծովի իրավական կարգավիճակը, որպեսզի հնարավորություն ստեղծվի ստուգման ենթարկելու Ռուսաստանի և Ի-

բանի միջև երթևեկող նավերը, ինչպես դա անում են թուրքերը Անծովյան նեղուցներում:[74]

Իրանի և Ադրբեջանի տնական բանակցությունների ընթացքում հնարավոր չեղավ վերոհիշյալ հարցերի, մասնավորապես կասպիականի պրոբլեմի կապակցությամբ ընդհանուր հայտարարի բերել կողմերի դիրքորոշումները: Ընդհակառակը, նրանց միջև լարվածությունը ժամանակ առ ժամանակ ընդունում էր պայթյունավտանգ ու սուր բնույթ: Այսպես, 2001թ. հուլիսի 23-ին իրանական մի ռազմանավ և երկու ռեակտիվ ինքնաթիռներ ստիպեցին, որ գեոֆիզիկական հետախուզության ադրբեջանական նավը հեռանա հետազոտության այն վայրից, որ Թեհրանը համարում է Կասպից ծովի իր հատվածը:[75] Այդ միջադեպից հետո Բաքուն մեղադրեց Իրանին, որ նա վարձում բռնազավթել Կասպից ծովի նավթով հարուստ ադրբեջանական սեկտորի մի մասը: Որպես մկանների ցուցադրման պատասխան քայլ, Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ գեներալ Հուսեյին Կիվրիկօղլուն օգոստոսի 23-ին պաշտոնական այց կատարեց Բաքու, որի ընթացքում Թուրքիայի ռազմա-օդային ուժերի տասը Ֆ-16 կործանիչներ ուղեկցում էին գեներալին, իսկ ապա սկսեցին Բաքվի վրա կատարել ցուցադրական թռիչքներ:[76]

Այդ միջադեպի առթիվ ամերիկյան վերլուծաբան դոկտոր Արիել Քոենը հանդես եկավ մի հոդվածով, որտեղ պահանջում էր, որ «Վաշինգտոնը պետք է բոլոր միջոցները ձեռնարկի, որպեսզի ամերիկանամետ կողմնորոշում ունեցող Ադրբեջանը չենթարկվի Իրանի կողմից ուժային ճնշման և որպեսզի «Բրիթիշ-պետրոլեում-Ամոքո», «Շևրոն», «Էքսսոն-Մոբիլ», «Ֆրոնտյերա-ռեսուրսիս» և այլ նավթային ընկերությունները, որոնք փաստորեն դարձել են տարածաշրջանի զարգացման շոգեքարշը, աշխատեն միանգամայն հանգիստ պայմաններում և վտանգի ոչ մի զգացում չունենան»:[77] Այդ վտանգի զգացումը իսպառ բացառելու համար ամերիկացի վերծագետը նախ առաջարկում էր վերացնել դարաբաղյան պատերազմի ժամանակ 1992թ. ամերիկյան կոնգրեսի կողմից ընդունված «Ազատության պաշտպանության ակտի» 907 ճշտումը և ապա ուժեղացնել Ադրբեջանի հետ ուղղակի ռազմական համագործակցությունը, ԱՄՆ-ի «լուման ներդնելով» Ադրբեջանի ցամաքային, ծովային, օդային և սահմանային պաշտպանության ուժերի ստեղծման գործում: Միաժամանակ նա գտնում էր, որ անհրաժեշտ է նպաստել Ադրբեջանի կապերի ամրապնդմանը ՆԱՏՕ-ի հետ և աջակցել այդ հանրապետության ռազմական հզորության մեծացմանը «գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում համագործակցության հիմքի վրա:[78]

2002թ. մայիսին տեղի ունեցավ Հ.Ալիևի պաշտոնական այցն Իրան, որն անընդհատ հետաձգվում էր 2001թ. ամռանից սկսած: Եվ թեև

կնքվեցին մոտ մեկ տասնյակի հասնող նոր միջպետական համաձայնագրեր, սակայն իրանա-ադրբեջանական հարաբերություններում որակական փոփոխություններ ու տեղաշարժեր տեղի չունեցան: Կողմերը չկարողացան համաձայնության գալ նաև Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցում: Ավելին, այցի ընթացքում իրանական մամուլը ծավալեց հակաադրբեջանական բուռն քարոզարշավ:[9]

Այս բոլորն անշուշտ չի նշանակում, որ Իրան-Ադրբեջան հարաբերությունների ապագան անհուսալի կերպով անորոշ է ու մշուշապատ: Կասկածից վեր է, որ Ադրբեջանի հանրապետությունը իր կարևոր տեղն ունի ԻԻՀ տարածաշրջանային քաղաքականության մեջ և Թեհրանում գտնում են, որ ելնելով ազգային ու տարածաշրջանային շահերից, ԻԻՀ-ը պարտավոր է լավ հարաբերություններ պահպանել Ադրբեջանի հետ, մանավանդ որ վերջինս այնուամենայնիվ հանդիսանում է իսլամը դավանող երկիր, իսկ ԻԻՀ-ը իր արտաքին քաղաքականության բնագավառում առաջնայնությունը տալիս է իսլամական երկրների հետ համագործակցությանը: ԻԻՀ սահմանադրության 11-րդ հոդվածում, որպես նպատակ, խոսվում է իսլամական աշխարհի քաղաքական, տնտեսական և մշակութային միասնության հասնելու մասին: Անկախ դրանից, Թեհրանն ամեն կերպ աշխատում է ներկայանալ որպես իսլամական ժողովուրդների իրական շահերի մենատեր արտահայտիչ: Ընդհանրապես ներկա աշխարհում ոչ մի ժամանակակից պետության բնորոշ չէ այնպիսի գաղափարականացված քաղաքականություն, ինչպիսին Իրանինն է:

Վերջին տաս տարիների ընթացքում ԻԻՀ-Ադրբեջան առևտրատնտեսական հարաբերությունների ցուցանիշները միշտ էլ բարձր են եղել: Դանդաղորեն, բայց այնուամենայնիվ երկու երկրների միջև ձևավորվում են տրանսպորտային ենթակառուցվածքներ: Կասպից ծովի համագործակցության երկրների կազմակերպության անդամ պետությունների հետ առևտրատնտեսական հարաբերություններ իրականացնելիս, Ադրբեջանը արտոնյալ պայմաններով օգտվում է Կասպից ծովի Էնզելի և Նոուշահր նավահանգիստներից, ինչպես նաև Իրանի հաղորդակցության ճանապարհներից: Կասպից ծովի իրանական ափին կառուցվող Ամիրաբադ նավահանգստի շինարարության ավարտից հետո կիրականանա Ամիրաբադ-Բաքու լաստանավային գետանցը: Ծրագրեր կան միացնելու երկու երկրների երկաթուղագծերն ու ավտոմոբիլային ճանապարհները: «Ազերբայջան հավայոլլարի» և իրանական «Քասպիյան Էյրլայնզ» ավիաընկերություններն իրականացնում են ուղիղ օդային չվերթներ Բաքվի և Թեհրանի միջև: «Քասպիյան Էյրլայնզը» ունի օդային չվերթներ նաև հետևյալ ուղղություններով. Թեհրան-Բաքու, Թավրիզ-Բաքու, Թավրիզ-Նախիջևան: Ադրբեջանում գործում են ավելի քան 300 իրանա-ադրբեջանական համատեղ ձեռնարկություններ և 200

զուտ իրանական ձեռնարկություններ: Վերջապես ԻԻՀ ևս ինչ-որ չափով ընդգրկված է Ադրբեջանի նավթային պայմանագրերի մեջ և այլն: Իրանը նաև հատուկ հետաքրքրություն է դրսևորում Նախիջևանի նկատմամբ: Նախագծեր կան Իրանի կողմից Նախիջևանում կառուցելու ցեմենտի գործարան, առևտրական խոշոր կենտրոն, իրականացնելու Խոյ-Նախիջևան գազատարի շինարարությունը և այլն: Առավել հեռու ապագայում ծրագրվում է վերականգնել Բաքու-Նախիջևան երկաթուղագիծը, որի Մեղրիով ընդհատվող հատվածը անցնելու է Իրանի տարածքով: Ներկայումս Իրանի տարածքվ իրականացվում է նաև Ադրբեջանի և Նախիջևանի միջև ադրբեջանական բեռնատարների երթևեկությունը, գործում են ավտոբուսային չվերթներ Նախիջևանի մի կողմից՝ Թավրիզի, Ուրմիայի, Մակուի, Խոյի, Մարանդի և Արդեբիլի միջև մյուս կողմից: Ծրագրվում է Արաքս գետի վրա «Օրդուբադ» և «Խուդուֆարին» հիդրոհանգույցների և Փոլդաշտշահ թախթի կոչված սահմանային շրջանում մշտական կամուրջ կառուցելու հարցը: 1997թ. ԻԻՀ և Նախիջևանի Ինքնավար հանրապետության միջև ստորագրված փախըմբոնման համաձայնագրով երկու երկրների քաղաքացիների երթևեկությունը իրականացվում է առանց վիզայի:

Այս բոլորն անշուշտ վկայում է այն մասին, որ չեն թուլանում Ադրբեջանում իր ներկայության և ազդեցության ամրապնդման ուղղությամբ Իրանի կողմից գործադրվող ջանքերը:

Նրա համար սկզբունքորեն կարևոր նշանակություն է ձեռք բերում ոչ միայն իր ունեցած հարաբերությունները տարածաշրջանի պետությունների հետ, այլև նույն տարածաշրջանի պետությունների միմյանց հետ ունեցած միջպետական հարաբերությունները:

VAHAN BAYBURDYAN

IRAN-AZERBAIJAN: NEIGHBORS OR GEOPOLITICAL-ECONOMICAL ENEMIES?

After the collapse of the USSR and the creation of the so-called "Southern Zone" of newly formed-independent countries the southern parts of the Caucasian countries became highly competitive. Here the interests of Great States clashed as well as those of regional force centers and in particular the interests of the Islamic Republic of Iran and Turkey. In this article the political aspect of Iran- Azerbaijan relations is analyzed on the basis of the International relations developing in this very region.

Particularly it is mentioned that the complicated as well as contradictory development of those relations makes it difficult for the analyzers to clarify whether Iran-Azerbaijan relations were those of frontier neighbors or of confrontational nature of geopolitical-economical enemies.

The fundamental question of Nagorno Karabakh, Islamic factor in Iran-Azerbaijan intergovernmental relations, the Caspian Oil factor as well as other problems are also examined in the article on the basis of crucial facts. Especially thoroughly is explained the question that one of the main reasons of Iran-Azerbaijan intergovernmental discrepancy is Iranian Azerbaijan or the so-called "Southern Azerbaijian" problem. The utopian plans of great number of political forces who want to unite Iranian Azerbaijian with the Republic of Azerbaijian, thus creating "the Great Azerbaijan" is also highlighted.

The official visit of Azerbaijianian president Haidar Aliev to the Republic of Islamic Iran in May 2002, is particularly stressed in the article. Though new intergovernmental agreements were signed between the two sides, so far crucial changes and transpositions haven't taken place in Iran-Azerbaijan relations.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես՝ Бюлент Араз, Турция: некоторые особенности отношений с государствами Закавказья. "Центральная Азия и Кавказ", 5 (17), 2001, с.104.
2. Տես՝ Swietochowski Tadeusz. Azerbaijan: Perspectives from the Crossroads. "Central Asian Survey", December, 1999, vol. 18, N 4, p. 425.
3. Малеки Аббас. Иран и Туран: к вопросу об отношениях Ирана с государствами Центральной Азии и Закавказья. "Центральная Азия и Кавказ", 5 (17), 2001, с.19.
4. Տես՝ Shaffer Brenda. Partners in Need: The Strategic Relationship of Russia and Iran. Washington Institute for Near East Policy. Policy Paper, N 57, 2001, p. 34.
5. Տես՝ Maleki Abbas. Iran and Russia: Neighbors without Common Borders. Հետևյալ գրքում. Gennady Chufrin (ed.) Russia and Asia: The Emerging Security Agenda, SIPR: Oxford University Press, 1999, p. 230-265.
6. Малеки Аббас. Иран и Туран, с. 110. Տե՛ս նաև ИТАР-ТАСС, 1991, 3 декабря.
7. Азеринформ, 1991, 16 августа.
8. Бигдели А., Обзор отношений между Исламской Республикой Иран и Республикой Азербайджан. "Аму-Дарья" 1999, N 2, с.19.
9. "Քեյհան" (պարսկերեն լեզվով թերթ), Լոնդոն, 11 հունիսի 1992թ.:
10. "Քեյհան", Լոնդոն, 4 հունիսի 1992թ.:
11. "Արաքս", Թեհրան, հուլիս, 1993թ.:
12. Բեգիջանյան Է., Իրանա-ադրբեջանական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Երևան, 2001, էջ 56:
13. Altstadt A.L. Azerbaijan's Struggle toward demoeracy. Conflict cleavage and change in Central Asia and the Caucasus. Cambridge University press, 1997, p. 125-127.
14. Բեգիջանյան Է., նշվ. աշխ., էջ 70:
15. Бигдели А., նշվ. աշխ., էջ 20:

16. Ислам Назаров: Азербайджано-иранские отношения сегодня и перспективы на ближайшие годы. "Центральная Азия и Кавказ", 5 (23), 2002, с.95.
17. Տես՝ A hero of time. "Economist", 1994, Februari 12-18, N 7850, p. 30.
18. "Քեյհան", Լոնդոն, 24 հունիսի 1993թ.:
19. Տես՝ Kechichian Goseph A. Theodore W. Karasik. The Crisis in Azerbaijan: how clans influence the politics of an emerging republic. "Middle East Policy", 1995, September, V. 4, N 1-2.
20. Տես՝ Дипломатия мира (об итогах визитов президента Азербаиджанской республики Гейдара Алиева в зарубежные страны 1993-1997), Баку, 1997, с.125.
21. Бигдели А., Обзор..., с. 21.
22. "Бакинский рабочий", 1994, 29 марта.
23. Out of the empire and into the fire. "US News and World Report", 1993. Octobcr 4, N 13, p.39.
24. Տես՝ Малеки Аббас. Иран и Туран, с. 111.
25. Նույն տեղում:
26. Բեգիջանյան Է., Նշվ. աշխ., էջ 72:
27. "Ռեսպուբլիկա", 29 հուլիսի, 1993թ.:
28. Տես՝ Кулиев Г., Мифы и реальности нефтяной стратегии Азербайджана. "Центральная Азия и Кавказ", 1999, N 4, с.164.
29. Independent News Agency "Sarg" Бюллетень.-1999, 9 марта, N53, с.2.
30. "Tehran Times", 26 april, 2001.
31. "Бакинский рабочий", 1998, 14 августа.
32. "Зеркало", 1997, N50, с.8.
33. Насер Сагафи Амери. От главного редактора. "Аму-Дарья" 1999, N 2, с.10-11,16.
34. Кулиев Г.Г., Геополитические коллизии Кавказа. "Центральная Азия и Кавказ", 1999, N 3, с.28.
35. Оруджев И., Гейдар Алиев и национальная политика. "Бакинский рабочий", 1998, 13 января.
36. "Бакинский рабочий", 1998, 10 января.
37. "Լրագիր", 11 օգոստոսի, 1995թ.:
38. "525 gazet", 1999, 28 сентября.
39. "Зеркало", 1998, N17, с. 11.
40. "Зеркало", 1999, N5, с.30.
41. Independent News Agency "Sharg" Бюллетень.-1999, 19 марта, N62, с.3.
42. "Зеркало", 1998, N23, с.26.
43. Տես՝ "Transitions", 1997, Vol. 4, N 4, September, p. 64.
44. "Зеркало", 1998, N23, с.4, 10.
45. "Зеркало", 1999, N120, с.4.
46. "Зеркало", 1999, N83, с.2.
47. "Зеркало", 1998, N2, с.10.
48. "Зеркало", 1998, N5, с.10.
49. "Зеркало", 1999, N48, с.2.

50. "Зеркало", 1998, N11, с.11.
51. "Зеркало", 1999, N15, с.18.
52. "Бакинский рабочий", 1998, 10 января.
53. Жигалина О.И., Эволюция национальной политики в ИРИ (1978-1998). Иран: эволюция исламского правления, М., 1998, с. 38.
54. Տես՝ Богданов М., Курс на Москву? "Независимая газета", 1999, 22 сентября.
55. Жигалина О.И., նշվ. աշխ., էջ 42:
56. Жигалина О.И., Этносоциальная эволюция иранского обшества, М., 1996, с. 211-212.
57. "Зеркало", 1999, N31, с.4.
58. "Зеркало", 1999, N1, с.10.
59. "Бакинский рабочий", 1999, 27 октября.
60. "Бакинский рабочий", 1999, 12 октября.
61. Նույն տեղում:
62. Տես՝ Հաբիբոլլա Աբուլհասան Շիրազի, Մելլիաթիա-յե ասիա-յե միանե, Թեհրան, 1992, էջ 336-337 (Պարսկերեն լեզվով):
63. The Iranian Journal of International Affairs, Spring 2000, Vol. XII, N1, p. 34.
64. Ислам Назаров, նշվ. հոդվածը, էջ 98:
65. Տես՝ "Центральная Азия и Кавказ", 5 (17), 2001., с.95-96.
66. "Зеркало", 1998, N31, с.4.
67. Моллазаде А., Безопасность Южного Кавказа и региональное сотрудничество. "Центральная Азия и Кавказ", 1999, N3, с.59.
68. Зеркало", 1998, N46, с.4.
69. Տես՝ Ардебили Х.К., Правовой режим Каспийского моря, развитие ресурсов и энергетических магистралей. "Аму-Дарья" 1999, N 1, с.17.
70. Տես՝ Bhatty R. and Bronson R., Nato's Mixed Signals in the Caucasus and the Central Asia. Survival, Autumn 2000, Vol. 42, p. 129-145.
71. Iran News, 1999, 22 փետրվարի:
72. Տես՝ Первый совместный Круглый стол Исламской Республики Иран и Республики Азербайджан. Институт политических и международных исследований, 12 мая 1999, "Аму-Дарья" 1999, N 2, с.129.
73. "Независимая газета", 1997, 16 апреля.
74. "Зеркало", 1998, N16, с.5, N 17, с.22.
75. "Зеркало", 1999, N126, с.5.
76. Տես՝ Iskenderov M., Wall T., Caspian Sea Disputes Flare, Raising Doubts about Oil and Gas Exploration. Eurasianet org., 7 august, 2001.
77. Др. Ариэль Коэн. США: задачи в сфере зашиты безопасности каспийских углеводородов от посягательств Ирана. "Центральная Азия и Кавказ", 1 (19) 2002, с.41.
78. Նույն տեղում, էջ 47:
79. Նույն տեղում, էջ 49: